XXII

ՆՈՐ-ԴԱՐ

XXII

№ 5 Շաբաթ, 10 Սեպտեմբերի 1883–1905 Շաբաթ, 10 Սեպտեմբերի № 5

Բաժանորդագինը պոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., համարը՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ», կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

Ա Զ Դ

«Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը շարունակւում է. սեպտեմբերից ց31 դեկտեմբերի վճարում են 4 րուբլի 50 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրակի և արեան վայրերից,
Արդարութեան ձայնը։
Յանցաւորները մեղադրում են։
Փրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են։—Նոր-Նախիջևանից, Թոփալ գիւղից, Նոր-Բայազիտից։
Ռուսական Թերթերից։
Մամուլի շուրջը։
Թղթակցութիւններ.—Արմաւիր։
Համշարինների երկրում։
Քաղաքական.—Պատերազմից յետոյ։
Ռուսիա և Ճապոնիա։
Հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

ԿՐԱԿԻ ԵՒ ԱՐԵԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակիցներից)

ԲԱԳՈՒԻՑ. Արդէն երեք օր է, որ կրկին փոխարքան՝ գրաֆ Վորոնցով-Դաշկովն ժամանել է և խիստ քննութիւն է սկսուած Նորին Պայծառափայլութեան հսկողութեան տակ՝ քննութիւնը կատարւում է փոխարքայի օգնական գեներալ Շիրինկինի անմիջական մասնակցութեամբ։

—

ԲԱԳՈՒԻ ԱՆՑՔԵՐԸ

(օգոստոսի 21-ից սկսած.)

ԲԱԳՈՒ, 2 սեպտեմբերի.—Առ այժմ չքննելով այն պատճառները, որոնք կարողէին առիթ լինել փետրուարեան արիւնալի օրերի վերսկսման, ներկայումս մենք ուզում ենք արձանագրել լոկ կատարուած իրողութիւնը։

Շաբաթ, օգոստոսի 20-ին, երեկոյեան մօտաւորապէս 5 ժամին, ինչպէս պատմում են ականատեսները, մի խումբ զինուած Թուրքեր օդի մէջ ատրճանակներ արձակելով, անցնում են Բազարնայա փողոցից. Նրանցից մի մասը փորձ է անում իջնել Կոլիւբակինսկի փողոցը Ցիցիանովի սկվերի մօտից, իսկ միւս մասը արագութեամբ, աջ ու ձախ օդի մէջ ատրճանակներ պարպելով, անցնումէ Բազարնայա փողոցը և անյայտանում Կուբինսկի հրապարակում։ Բազարնայա փողոցը, որ Թուրքերի շուկանէ, իսկ Կուբինսկի հրապարակը չարագործների բոյնը, օդի մէջ արձակած ատրճանակների ձայնը ընդունելով որպէս յարձակման ազդանշան, վայրկեանապէս ոտի է հանում այդ Թաղերի Թուրքերին։ Հէնց նոյն միջոցին այդ ատրճանակների ձայները խռովութիւն են առաջ բերում նաև պարապետի շուրջը գտնուած հայերի մէջ, որոնք մի վայրկեանում սկսում են կրակել Կոլիւբակինսկի փողոցից դէպի պարապետը խուժել ցանկացող Թուրքերի վրայ, և այսպիսով սկսւումէ արիւնհեղութիւնը, որ կէս ժամւայ ընթացքում տարածւում է ամբողջ քաղաքը, և քաղաքի իւրաքանչիւր փողոցում սկսւումէ սոսկալի տրագեդիան։ Հայը խփումէ Թուրքին, Թուրքը հային հէնց պատահած տեղը... Շնորհիւ ընդհանուր նահանգապետի ձեռք առած միջոցների, դուրս հանուած զօրքը սփռւեց քաղաքի փողոցները և պատերազմական դիրք ընդունելով սկսեց կրակել աջ ու ձախ անխտիր։ Զօրքի այդ վարմունքը զգաստացրեց կռուողներին և փողոցները դատարկւեցան։ Մի առ ժամանակ դադարեց հրացանաձգութիւնը, բայց մթնելուն պէս վերսկսուեց, ամբողջ գիշերը լսւում էր հրացանաձգութիւնը, զօրքը շարունակ զալպ էր տալիս և Թուրքերը, ամեն անգամին ահագին Թափով զոհեր տալով, յետ էին քաշւում։ Հետևեալ օրը, կիւրակէ, նոյն դրութիւնն էր. զօրքը կատարում էր իւր դերը, ոչ մի կողմի չէր Թոյլ տալիս ընդհարուելու, փորձ անողի վրայ կրակ էր Թափում և այսպիսով խմբական յարձակումների առաջն առնում։ Երկուշաբթից, օգոստոսի 22-ին, և յաջորդ օրերը մինչև 24-ը դրութիւնը նոյնն էր։

Խանութները փակ, փողոցներում մեռելութիւն էր տիրում, դադարած էր ամենայն մի երթևեկութիւն. տիրում էր մահու սարսափ...

—

Օգոստոսի 22 ից լուրեր հասան, որ այրւում են Բալախանիի նաւթահանքերը, իսկ 23-ից—Բիբի-Հէյբաթինը։ Հազարաւոր Թուրք խուժանը (բոլորն էլ մերձակայ Թուրք գիւղերի գիւղացիներ) կատարելով այդ չլսուած և իւր տեսակում ամենասարսափելի եղեռնագործութիւնը, տեսնենք կ՚ստանա՞յ արդեօք իւր արժանի պատիժը...

—

Օգոստոսի 24-ից լսուեցան քաղաքում իբրև հաշտութեան ձայներ. քաղաքի հաշտարար կոմիտէն սկսեց շրջել փողոցները և հաշտութեան յորդորներ կարդալ, բայց ո՞վ էր հաւատում... 25-ի առաւօտը, հաշտութիւն գոռացող Թուրք ամբոխը քաղաքի զանազան մասերում սպանեց տասներկու հայ, հայերն էլ ինչպէս յետ չը մնացին և դուրս եկաւ «ակն ընդ ական...»։ Օգոստոսի 25-ի երեկոյից Թուրքերն սկսեցին իրենց հին փեշակը հրդեհելն ու կողոպտելը և շարունակում են մինչև օրս։ Ընդհանուր նահանգապետի հրամանով, որ պատուհանից կամ տնից որ ատրճանակ կամ ո՛րև է հրազէն պարպուեց, պէտք է ռմբակոծուէր այդ տունը, և ռմբակոծուեց ոմն Ալիևի տունը։ Քիչ էր մնում խաբէութեամբ նոյն վիճակի ենթարկուէին օտարազգի Զայցի և հայազգի Փիլիպպոսեանի տները...

Փողոցներում հրազէնով մարդ սպանելը մի փոքր դժուարացել է, որովհետև պայթիւնի ձայնի վրայ իսկոյն վրայ է հասնում զինուորների խումբը որին հրամայուած է գնդով պատասխանելու։ Սպանութիւնը սուս ու փուս կատարելու համար, այժմ Թուրքերը ձեռք ընկած հայի կամ փորոտիքն են Թափում, կամ կտոր-կտոր անում, վիզը կտրում դաշոյնով և այլ տեսակի դանակներով։

Այսօր սեպտեմբերի 2-ն է և դեռ հաշտութիւն չէ կայացել։ Քաղաքը բաժանուած է երկու մասի. մի մասը Թուրքերի տրամադրութեան տակ է, իսկ միւս մասը քրիստոնեաների։ Ոչ Թուրք է համարձակւում քրիստոնեաների Թաղամասից անցնել և ոչ հայն Թրքական մասից... Նոյն իսկ քահանաները ննջեցեալ Թաղելու համար զինուոր-պահակախմբով են գնում հանգստարան, որ դժբախտաբար Թրքական մասումն է գտնւում։ Սեպտեմբերի 1-ից սկսեց գործել ձիաքարշը, բայց ոչ բոլոր մասերում։ Ձիաքարշը շրջում է մինչև պարապետ, ուրիշ խօսքով քրիստոնէից սահմանը։

Քաղաքում պաշարեղէն չըկայ. բընակչութիւնը նեղ դրութեան մէջ է։

—

Բալախանից մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ դեռևս մինչև օգոստոսի 29-ը ծխում էր Բալախանին։ Օգոստոսի 29 այրել էին նա՛և Կասպիական ընկերութեան հանքերը։

Այժմ մօտաւորապէս կարելի է հաշուել այրուած ֆիրմաները. Այրուած են ամբողջապէս իրանց շինութիւններով և գրասենեակներով—Կասպիական ընկերութեանը, Ռունոյինը, Թումայեանինը, Արշալոյս, Մանթաշեանինը (Զաբրատում գտնուած գործարանը ազատուած է), Փիթոյեանինը, Միրզոյեանինը, Կրասիլնիկեանինը, Մելիքեանինը, Արամազդը, Ադամեանինը, Տէր-Յակովբեանինը, Լաթան գործարանը, Շիրվանը, Կովկասեան ընկերութեանը, Կովկասը, Սուչաստնիկի, Ռադուգան, Պետրոլը, Բալախանեան ընկերութեանը, իշխան Գագարինինը, Գալպերինինը և ուրիշ մանր ֆիրմաներ։

Այրուել են հետևեալ տեխնիկական ամբարները. Բաղդասար Ցակոբեանինը, Դրուժբա ընկերութեանը. եղբ. Զախմախչեաններինը, Դոլգիւստինը, եղբ. Դիլդարեանցներինը, Աշխէնը, եղբ. Տէր-Ցովհաննիսեաններինը։ Ցիշեալ ամբարների արժէքաւոր իրերը կողոպտուած են, ինչպէս և բաւականաչափ խանութներ, որոնցից մեկ մասը այրուած է։

Հասարակական հիմնարկութիւններից այրուած են Ռոմանիի ամբուլատորիեան և Բէկէնդորֆի Թատրոնը։

Փոքր վնաս կրող ֆիրմաններն են. եղբ. Նոբէլի հանքերից մնացել է 2/3 մասը. Կասպեական—Սև ծովեան ընկերութեան վնասները կիսով չափ են. Մոսկուա—Կովկասեան ընկերութեան վնասները Թեթև են։ Բէկէնդորֆը չէ վնասուած. Վարանցով-Դաշկովի 6 վիշկաներն այրուած, Շիբաև և ընկ. վնասուել է կիսով չափ. Մուսա-Նաղիևի և Ասադուլաևի հանքերը մնացել են ազատ և օգոստոսի 29 ից գործում են...։ Հրձիգութիւններից յետոյ Թէ՞ ինչ բարբարոսութիւններ են կատարուած Բալախանում և առհասարակ հանքերում, այդ մասին կըխօսենք առանձին, յետոյ։

—

Սպիտակ քաղաքամասին գրեթէ կից Քիշլի հայաբնակ գիւղը գրեթէ ամբողջովին կողոպտուած է և տներն էլ այրուած։ Այրուած են 22 տուն, որոնց բնակիչները—վարպետներ, քարտաշներ և բանւորներ—մնացին միանգամայն մերկ, զրկուելով իրենց տարիների ընթացքում ճակատի դառն քրտինքով վաստակած կարողութիւնից։

—

Քաղաքում տեղի ունեցած հրձիգութիւնների և կողոպտումների մասին հետևեալ անգամ։

Ընդհանրապէս հայ զոհերի Թիւը չի կարող լինել 150-ից պակաս։ Այս Թուի մէջ չեն մտնում վիրաւորեալները։ Գուցէ հնար ունենանք ուղարկել խմբագրութեանդ զոհերի ճիշտ անուանական ցուցակը։

Տ. Գնունի։

—

ԲԱԳՈՒ. 5 սեպտեմբեր. դեռ ես Բագուն չէր մոռացել փետրուարեան սոսկալի կոտորածը և ահա նորից ենթարկուեց բարբարոս խուժանի կորստաբեր հարուածին, որը անշուշտ բաց արեց անպաշտպան ու վշտակիր հայերիս սրտերում այնպիսի վէրքեր, որոնք երկար տարիներ կըմնան անբուժելի։

Փետրուարեան կոտորածը, ինչպէս երևում է, Թուրք խուժանի առաջին փորձն էր, որը արգելքի չհանդիպելով առիթ տուաւ նորից կրկնելու օգոստոսի 20-ին, սակայն այս անգամ աւելի լայն ծրագրով, սևահոգի հեղինակների ձեռքով մշակուած։

Գազանացած Թուրք ամբոխը չբաւականանալով անմեղ զոհերի արիւնով, կրակի ու Թալանի մատնեց նրանց կայքերը, քայքայելով կենդանի մնացածներին ևս նիւթապէս։

Չկան այլևս Բալախանու ու Բիբի-Էյբաթի նաւթահանքերը, չկան նրանց ծառայողների, տարիների ընթացքում արիւն քրտինքով ձեռք բերած կայքերը. այդ բոլորը մի ակնթարթում մասամբ Թալանուեցին, մասամբ էլ կրակի ճարակ դարձան։ Այժմս այդ տեղերը աւերակների են նմանում, ուր տիրում է գերեզմանային լռութիւն։

Բանւոր դասակարգը, կորցնելով ամեն ինչ և մի քանի օր դիմադրելով հազարաւոր զինուած խուժանին, կարողացել է միայն իւր անձն ազատել և այսօր Բագուի փողոցներն են ապաստարան հանդիսացել այդ Թշուառներին։

Ո՞ւր գնան, ո՞ւմ դիմեն այդ խեղճերը, քանի որ իրենց ծննդավայրերումն ևս տարածուած է այդ վարակիչ ախտը, և վերջապէս ի՞նչով ճանապարհուեն, երբ մեծամասնութիւնը առանց կոպէկ ունենալու, յուսահատ դրութեան մէջ սպասում են գործատէրերի դրական պատասխանին։

Թէև կան ֆիրմաներ, որոնք տեսնելով իրենց ծառայողների վիճակը, տալիս են նրանց օրական հացի գին, սակայն այդպիսիները շատ չնչին տոկոս են կազմում, ուստի անհրաժեշտ է նիւթական շուտափոյթ օգնութիւն, որին կարօտ է բանւոր դասակարգը։

Բագուն շատերին է օգնել, շատերի արցունքը սրբել. այժմս ինքն է հարկադրուած ձեռք պարզելու և օգնութիւն հայցելու ուրիշից։ Ուրեմն ով ունի մարդկային բարի զգացմունք, Թող չըխնայ օգնել ինչով կարող է։

Ս. Ց. Ս.

—

ԲԱԳՈՒԻՑ.—Դրութիւնը մնում է տագնապալից։ Խանութները փակ են, կեանքը մեռած, մարդիկ միմեանց հանդիպելու հնարաւորութիւն չունեն։ Մասնաւոր սպանութիւնները շարունակւում են։ Սեպտ. 3-ին հայոց եկեղեցու մօտ օրը ցերեկով մի Թուրք բռնութի մի հարուածով սպանեց մի ծերունի հայի Սողոմոն Պօղոսեան անունով, որը, բացի աղքատ և ծերունի լինելուց, այլ և խելագար էր։ Նոյն օրը Միրզոյեանների գրասենեակի առաջ, երբ Թուրք և հայ գործաւորները հաւաքուել էին իրենց հաշիւը ստանալու համար, վէճ ծագեց նրանց մէջ, որի ժամանակ Թուրքերից մէկը ատրճանակի մի հարուածով սպանեց մի հայի. այդ բանից գրգռուած մի ուրիշ հայ սպանեց նոյն Թուրքին։ Ցիցիանովսկի փողոցում մի Թուրք սպանեց մի ուրիշ Թուրքի այն պատճառով, որ վերջինս հայի ջուր է ծախել։ Այսպիսի դէպքեր շատ են պատահում։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Ռուսաստանում Նախիջևանից վերաբնակած և դրսից գաղթած հայերի Թիւը հասնում է մինչև 5000-ի։ Այստեղ մինչ օրս ոչ եկեղեցի կայ, ոչ դպրոց։ Հոգևոր իշխանութիւնը ռուսաստանցիհայերին հեշտութիւն տալու համար Ռոստովի և Նոր-Նախիջևանի սահմանում շինել է Ս. Գէորգ եկեղեցին, բայց չկայ դպրոց։ Այդ պակասութիւնը լրացնելու համար Ռոստովցի հայերը իրենց մէջ ժողով են արել, ընտրել են 10 մարդ, որպէսզի Ռոստով քաղաքում բաց անեն երկդասեան, երկսեռ հայոց դպրոց։ Գործն սկսուած է. գործի գլուխ կանգնած են ականաւոր մարդիկ։

—

ՇՈՒՇՈՒՑ Թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը հեռագրում է մեզ սեպտեմբերի 7-ից. «Երեկ ընդհանուր նահանգապետը մեկնեց Աղդամ Եւլախի և Շուշու ճանապարհի վրայ ապրող բնակչութիւնը խաղաղեցնելու համար։ Նրա մեկնումից յետոյ հանդիսաւոր Թափօր եղաւ. եկեղեցում և մզկիթում երդուեցին սրբութեամբ պահպանել խաղաղութիւնը, խոստանալով մոռանալ անցածը և առաջուապէս հաշտ ապրել իբրև եղբայրներ։ Պատրաստւում ենք հինգշաբթի շէյխ-ուլ-իսլամի և ընդհանուր-նահանգապետի հետ շրջել գիւղերը մինչև Եւլախ»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ։ Հաջի-չէնցի չորս հայ գիւղ վերադառնալիս, մէկը նրանցից Ղրոխ վաշտում՝ բաժանւում է և աղբիւրից ջուր խմելու միջոցին՝ հրացանի երկու հարուածով գնդակահար տեղն ու տեղը ընկնում է։ Միւս ընկերներն հարայ են. տալիս մօտակայ հայոց Հաջիչէն գիւղը, գիւղացիք գալիս են և դիակը տանելու միջոցին նկատում են չորս զինուած Թուրքերի փախչելիս։ Կանչում են, բայց Թուրքերը չեն լսում, շարունակում են փախչել. հայերը նրանց ոճրագործների տեղ ընդունելով, կրակ են տալիս, և մէկին սպանում են։ Այսօր յիշեալ գիւղից գիւղացիներ եկել են և օգնութիւն են խնդրում յայտնելով, որ Թուրքերը պաշարել են գիւղը։ Այսօր լուր ստացուեց Թէ Զարդախլու հայ գիւղը նոյնպէս պաշարուած է. գաւառապետը գնաց Զարդախլու։ Գաւառապետից ստացուեց լուր Թէ մի քանի աւազակներ են եղել, փախել են։

—

ԲԱԼԱԽԱՆՈՒ ԱՒԵՐՈՒՄԸ

Բագուի փետրուարեան կոտորածը այնպիսի մի երևոյթ չէր, որ տեղն ու տեղը բուսնէր ու անյայտանար առանց հետք Թողնելու։ Նա մի սոսկալի հրդեհ էր, որ ճարպիկ ձեռքերից մի տեղ բռնկուելով ջնջման, աւերածի կարմիր հեղեղով տարածուեց ամեն տեղ. քամիներն տարան նրան Երևան, Նախիջևան, Շուշու գաւառները։ Նա կրկին հասաւ իւր առաջուայ տեղը մի երկրորդ և աւելի ուժգին բռնկումն յառաջ բերելու համար։ Դա մի շուրջ-կովկասեան արիւնալից ճանապարհորդութիւն էր։

Բագուի երկրորդ կոտորածը սկսուեց այն օրը, երբ Շուշում գաւառի խաղաղութիւնն էր կնքւում՝ օգոստոսի 20-ին շաբաթ օրը։ Երեկոյեան դէմ քաղաքից Բալախանի եկողները պատմում էին, որ ձիաքարշի գործադուլը ճնշելու համար նրանց վրայ երթևեկող զինուորների վրայ հրացաններ են պարպել փողոցների անկիւններից, որից յառաջացած Թեթև յուզումը իսկոյն վերջացել էր։ Երբ ժամի 5-ին լուրեր հասան կոտորածի մասին, բոլորը հաւատացած էին, որ կրկին ձիաքարշի առԹիւ եղած Թեթև յուզման կրկնութիւնն է ու շուտով կվերջանայ, բայց ո՞ւր, հեռախօսը հաստատեց դոյժը...... կոտորած, կրկին կոտորած...... Քաղաքից եկողները իսկոյն յիշեցին քաղաքի Սաբունչինեան կայարանի դրութիւնը։—Կենդ-կենդ միայն հայեր էին երևում. Կայարանի Թուրքի խանութի առաջ նստել էին 15—20 անուանի Թուրքեր, որոնք շրջապատել էին քաղաքի յայտնի Հաջիին և սպասում էին գնացքի գալուն նրան բաղ ուղեկցելու՝ Սաբունչու մօտ գտնուած Մարդաքեան գիւղը։ Մի մօտիկ անձնաւորութիւն ինձ պատմում էր, որ այդ ժամին Թուրքերը ուղղակի սանձարձակ էին, հայերի հետ գրեթէ կռուի տանով խօսելիս յետ էին քաշում փեշերը և ցոյց տալիս արքունական ձևի ատրճանակները։ Երեկոյեան Թէ մեզ մօտ և Թէ քաղաքում խաղաղ անցաւ, սակայն այդ խաղաղութիւնը չարագուշակ էր. ամեն ոք երևակայում էր փետրուարեան սարսափները և ներկայ ծանր դրութիւնը, շրջապատուած յայտնի Թուրք գիւղերով։

Կիւրակէն անցաւ խաղաղ, Թէև դրութիւնը լարուած էր և յուզումն էր նկատւում բոլորի մէջ, որից և ամենքը սարսափը սրտներում անկողին մտան։ Քաղաքում հրացանաձգութիւնը շարունակւում էր իբրև Թէ ձիաքարշի զինուորների վրայ, բայց իրօք ընկել էին մի քանի հայ ու Թուրք։ Դրութիւնը աւելի բարդանում էր։

Երկուշաբթի մինչև կէսօր առանձին բարդութիւններ չեղան։ Իսկ կէսօրից յետոյ կատարեալ խուճապ տիրեց բոլորին։ Թուրքերը զատուեցան հայերից, Թողնելով գործը ու սպառնական դիրքեր բռնեցին, շատերը գիւղերը գնալով, ոմանք Նոբելի հանքերում խմբուելով։ Հայերն էլ մերժեցին բանել և խմբուեցան կենդրոնական հանքերում։ Երեկոյեան դէմ Սաբունչի գիւղի մօտերից երկու հայեր հասան մեր գործարանը (Ռուսական ընկերութիւն «Նեֆտ»)։ Նրանք «Ռադուգա» ընկերութեան բանւորներից էին, որոնք պատմեցին հետևեալը. «Մեր կառավարիչը երեք օր է փախել է քաղաք մեզ անտէր Թողնելով։ Մենք ապրում էինք Սաբունչեցի յայտնի Կափարի տանը, ուր և փակուել էինք և ոչ ոք չգիտէր մեր այնտեղ լինելը։ Դռան ճեղքերից տեսնելով մօտ 10 ռուս զինուորներ, քաղցից նեղուած դուրս եկանք և նրանց դիմեցինք, իսկ նրանք իրենց համար երկիւղ կրելով, հրմշտկում էին մեզ որ հեռանանք։—Այս նկատելով Թուրքերը սկսեցին հալածել մեզ. ասացի՝ ընկեր, հետևիր ինձ և վազենք եկան քանի քանի ճաղերի վրայից վեր ցատկելով, չընայելով որ հետևներիցս գնդակները տեղում էին կարկտի պէս։ Միւս ընկերներս մօտ տասն հոգի ետ դարձան, անպատճառ սպանուած կլինեն»։ Ի նկատի առնելով վտանգը, հանքերի կառավարիչները սկսեցին ոստիկանապետից պահապան զինուորներ պահանջել։ Մի քանիսին յաջողուեց 5—10 զինուոր ստանալ, իսկ մնացածները ձեռնունայն մնացին, մեր ֆիրման նոյնպէս։ Շրջակայ փոքրիկ ֆիրմաներից և խանութներից անդադար դիմում էին դէպի մեր գործարանը։ Երեկոյեան ժամը 6-ին հասան և մեր Ռոմանու գիւղի սահմանում գտնուած նաւթահանքի ծառայողները ու բանւորները, որոնք ճանապարհին կռուի բռնուելով Թուրք զինուած խմբերի հետ, մի մասը Թողել էին ճանապարհին, իսկ իրենք շարունակ հրացան պարպելով դէպի հետապնդողները հասել մեզ մօտ։ Յետոյ իմացանք որ ճանապարհին մնացածները տարուել են ոստիկանատուն և զինաԹափ եղել։ Արդէն մԹնել էր, երբ սկսուեցան հրդեհները Սաբունչի գիւղի մօտից։ Առաջինը «Սուչաստնիկի» ընկերութեան հանքերն էին, որոնց կրակը հարաւային քամին դէպի հիւսիս քշելով վառեց նաև Կասպեան, Նեֆտ, Բորն, Շիբաև ընկերութիւնների և այլ ֆիրմաների հորերը, ապա անցաւ Զաբրատ ու Ռոմանի մասերը։ Գիշերը Բալախանին երեք կողմերից վառւում էր, ծխի մութ—կարմրագոյն քուլաներով պատելով չարագուշակ հորիզոնը։ Արեան հոտ էր փչում... Ամբողջ գիշերը անքուն անցկացրինք։

Երեքշաբթի օրը հիւսիսային քամին կրակների հոսանքները փոխելով վառեց Զաբրատի ու Ռոմանու և Սաբունչու ու Բալախանու մէջ գտնուած ամփոփակի գրեթէ բոլոր հանքերը, այլ և Միրզոյեանների և «Սուչաստնիկի» ընկերութեան բնակարանները։ Այժմ արդէն հաստատած ծխի միջից, երբ քամին բանում էր արևգակի մԹնած դեղնագոյն երեսը, ցից ցից երևում էին այստեղ ու այնտեղ հատիկ հատիկ, կամ Թումբ շատ փոքր վիշկաների խմբեր։ Հրդեհից փոքր ինչ ազատել էին միայն Մանթաշեանի, Պիտոևի և Արամազդ ընկերութիւնների գործարանները, ուր խմբուել էին շրջակայ մանր ֆիրմաների մարդիկ՝ հայ ու ռուս և վճռել պաշտպանուել մինչև վերջ։... Հանքերի կենտրոնը ազատ էր Թուրքերից, բայց և այնպէս շարժում չկար. երբեմն միայն Կասպեան ընկերութեան գործարանի մօտերը պայթիւններ էին լսւում, դրանք արձակւում էին գողունի հրդեհել ու լրտեսել աշխատող Թուրքերի դէմ։ Այդ օրը կտրուեց Զուգուլբեանեան կոչուած ջրանցքը և ընդմիշտ լռեց հեռախօսը։ Մինչև լռելը հանքի վարչութիւնը շարունակ պահապան զինուորներ էր պահանջում ոստիկանապետից և մերժումներ ստանում։ Վերջին ժամին նա հրամայել էր չմիացնել հեռախօսը իւրի հետ, ասելով որ «Անկարող է, յոգնել է»։ Հեռախօսը լռելուց յետոյ նամակ գրուեցաւ և խնդրուեցաւ գոնէ ժամանակով մի քանի պահապան զինուորներ ուղարկել կայարան փոխադրուելու համար։ Իսկ նամակը, որ երկար աղաչանքից յետոյ յանձն էին առել տանելու երկու ռուս բանւորներ, կրկին յետ բերուեցաւ, որովհետև ոստիկանատանը շրջապատող կոզակները չէին Թողել բանւորներին մօտենալ, այլ քշել էին, ինչպէս բանւորները ասում էին, նագայկաներով։ Կրիտիկական րոպէներ էինք անցկացնում։ Անպաշտպան, անյոյս, բոլորի աչքի առաջ նկատւում էր հրեղէն գոյներով ծածկուած սուգի հեռանկարը և նրա ետևում անխուսափելի մահուան ճիրաները։ Երեկոյեան դէմ զօրքեր հասան Բալախանի Թնդանօթներով։ 4 անգամ ահագին Թնդիւններ լսուեցան—առաջին Թնդանօթն է, արձակուեց Սաբունչի գիւղի վրայ։ Միւս կողմից մի լուր հասաւ, Թէ քաղաքից անուանի Թուրքեր են եկել և հաշտութիւն են ուզում։ Բոլորս էլ ցնծում էինք, յուսալով որ վերջապէս կանցնին սարսափի օրերը. Ջրանցքը կբացուի, պաշարուածները կազատուեն.... Ունայն յոյսեր...

Միւս օրը՝ չորեքշաբթի սոսկալի չտեսնուած նորդ էր փչում։ Հարաւն՝ Նոբելի այրուող հորերի սևաԹոյր ծուխը լցրել էր մեր գործարանի բակը. սենեակներում գիշերային մԹութիւն էր տիրում, որ մերթ ընդ մերթ բաց ու հուսլ էր լինում, երբ քամու ուժգին հոսանքները մի վայրկեան տեղի էին տալիս արեգակի առաջ։ Հրդեհի մուրը և տապը դէմքերիս էր զարնւում։ Հրդեհին դիմադրողները հագել էին արհեստաւորների պաշտպանողական ակնոցները գլխներիս կրակ էր Թափւում. օդի մէջ ածխի անհամար կտորները պտոյտներ էին գործում մեր գլխին գիշատիչ անգղների նման։ Նոյն րոպէին պատռուեցան հանքի մօտից անցնող աւուր մէջ մի քանի նաւթատար գծեր, ծուխը աւելի խեղդիչ ու սպառնալի դարձաւ, մանաւանդ մօտակայ Չիրկասովի, Միտրոֆանովի և մեր ֆիրմայի տների համար։ Ամեն ոք տեղ էր որոնում մերը փախուելու դէպքում ելքի համար և տեղ չէր գտնւում։ Բարեբախտաբար առաջն առան, մի քիչ յետոյ օրը փոքր ինչ պարզուեց և արեգակը տարածեց իւր մեռելագոյն ճառագայթները.. Շուրջը նայեցի. վիշկաների հսկայական անտառից այստեղ ու այնտեղ մի քանիսն էին մնացել մենիկ-մենիկ կանգնած։

Զոհերի Թիւը անորոշ է, բայց բազմաԹիւ չէ։

Մինչև այդ ժամանակ մեր գործարանի վրայ ոչ մի յարձակումն չէր եղել։ Մեր առաջ ով գիտէ ինչ հրաշքով կանգնած մնացած 3 վիշկաների միջից առաջին անգամ ուժգին Թափով մի քանի հրացանի պայԹիւն եկաւ. գնդակները երկաԹեայ ԹերԹերին զարնուելով ցած Թափուեցան, մեր կողմից պատասխանեցին աւելի ուժգին Թափով և ամեն ինչ լռեց։ Ահարեկուած մեծաւ մասամբ անզէն ամբոխի համար դա յարձակման մի ազդանշան էր Թւում։ Ուստի պէտք զգացուեցաւ յայտնել Կասպեան ընկերութեան գործարանում պաշտպանուողներին, որ հարկաւոր դէպքում օգնութեան հասնեն։ Դուրս եկայ փողոց մի ընկերով. ոչ մի զինուոր, ոչ մի Թուրք։ Հայեր էին միայն շրջում շփոթուած աջ ու ձախ

ձախ նայելով և ռուսներ՝ իրենց սովորական ընթացքով: Կասպեան ընկերութեան գործարանում արդէն իրարանցում էր ընկել: Նաւթարդիւնաբերողների Տեխնիկական մասից յայտնել էին, որ իրենց վրայ թնդանօթ է պարզուած, զինուորներ են սպասում և ուղարկուել ոստիկանատուն: Ուստի ամենքը հաւաքում էին ունեցած չունեցածը ով ինչ կարող էր, ում ինչ ձեռք էր ընկնում և պատրաստւում էին կայարան փախչել, թէև մի մասը հակառակն էր պնդում: Այրւում էին ընկերութեան գոմը և մթերանոցը (Матеріальный складъ): Բոցը լիզն էր՝ թանձր ծխով, որի միջից հազիւ երևում էին մարդկանց դիմակները՝ վհատուած, լցուած բնաւեր թռչունների նման: Թախծալից ձայնով նրանք ասացին ինձ, որ կառավարչի օգնականը (կառավարիչը բացակայ էր) իր ընտանիքով փախել է, անտէր թողնելով նրանց: Օրինակը վարակիչ է. ծառայողներից և բանուորներից շատերը նրան են հետևել, որոնց պատրաստւում էին հետևել և մնացածները: Այս իրողութիւնը խորտակեց մեր բոլոր յոյսերը: Գիւղի զինուած ամբոխը պիտի խուժէ մեզ վրայ և մեզ օգնող չպիտի լինի, ահա ինչ էր մտածում ամեն մէկը մեզանից: Եւ ահա սկսուեց գաղթականութիւնը… Տաճկահայ գաղթականներին տեսել էինք, բայց գաղթական չէինք եղել և եղանք… Կէս ժամուայ ընթացքում բոլորը պատրաստ կանգնած էին դրան առաջ: Կառավարիչը դուրս եկաւ տնից իր պառաւ դողդողացող մօր ձեռքից բռնած, թողնելով ետեւում հազարներ արժեցող գրքեր, գորգեր ու զանազան տնային կահկարասիներ: Այդպէս և ամեն մէկը: Վերցրինք ինչքան կարող էր մի ձեռքը վերցնել: Եւ այնքան գրքերը, որ հայի կուլտուրական բնական ձգտումներ մացրել կեղտի, մաղուտի չարքաշ աշխատանքի, նախկին աքսորի այդ վայրը, երեւի ոտքի կոխան դարձան մեզնից յետոյ կամ կրակի արժանի իր համարուեցան ու այրուեցան: Ամենայետին գրագէտն էլ իր գրքերի համար էր ցաւում տառապալէս: Կառավարչի օգնականը այնքան միամիտ էր, որ յոյս ունէր պարսկահպատակ Սալախ Հասան օղլու վրայ, որին յանձնարարում էր լաւ պահպանել թողնուածը, մինչդեռ մեր մեկնելուց իսկոյն յետոյ հէնց այդ Սալախը անմիջապէս վազել է Սաբունչի, և խուժանը բազը թափելով նախ կողոպտել, ապա այրել տուել դատարկ տներն ու շէնքերը:

Դռներից դուրս գալով գնում էին զինուածները, մէջ առած անզէններին — թւով 400 հոգի: Վինտերների պատի տակից մի թուրք մի քանի անգամ տարճանակ պարպեց վրաներս թագստեան տեղից և փախաւ: Հասանք կայարան, որ այնքան հեռու չէ մեր գործարանից: Մեզ յայտնեցին, որ եկել անցել են Նաւթարդիւնաբերողների խորհրդի տեղական մասի, Միրզոյեանի, Սուլէյմանեանի, Փիթոյեանի, Սաբունչու մասի, Տէր-Յակոբեանի և այլ մօտիկ հանքերում խմբուածները ռուսներ ու հայեր և որ մնացել են Զաբրատում միմիայն Մանթաշեանի, Փիթոյեանի և Արամազդի գործարաններում խմբուածները՝ պաշարուած դրութեան մէջ: Ես հրաժարւում եմ նկարագրել կայարանում խմբուած քրիստոնեաների դրութիւնը: Անապատելի իրողութիւնը նրանց սրտուշ էր դարձրել: Նրանք գիտեն, որ Բալախանին թողնելով շատ բան են կորցնում, թերևս իրենց աւուրեայ հացը, բայց պէտք է թողնել այս դժոխքը, անիծեալ վայրը, ուր աւելին է չնչում ամեն տեղ: Իսկ քարափրտ — ժանդարմը իւր խուզարկութիւններն էր կատարում, քաղաք գնացողները պիտի զինաթափուէին: Մի ռուս բանուոր աչքով-յօնքով ցոյց էր տալիս նրան զէնք կրողներին, որոնք չէին ուզում զրկուել իրենց պաշտպանից: Գնացքի սուլոցը ականջներիս հասաւ: Բոլորն էլ ոտքի ելան: Գոյութեան պայքարն էր մղւում. ամենքի աչքերը դէպի վագոնների մուտքերն են յառած, ինչ գնով էլ լինի, այս գնացքով պիտի հեռանալ այս խեղդուկ վայրից: Մի յամառ գրոհով ամենքը դիմեցին դէպի վագոնները: Մի քանի տեղեր մանկական և կանացի ճիչեր լսուեց. մի կին երեխան գրկած անընդհատ զարկում էր թափով մի օտար տղամարդու թիկն, որ դէմ ընկել կանգ էր առել դռան շէմքում: Ուրիշները պատուհաններից էին ներս ընկնում: Թէ նստարանները և թէ յատակը բռնուեցան:

Վերջապէս գնացքը ճանապարհ ընկաւ, անցանք Սաբունչու փոքրիկ կիրճը. բայց դաշտում գնացքը կանգ առաւ: Ես դուրս նայեցի, հազարաւոր ամբոխը խռնւում էր այնտեղ. սկսուեց մի անդիմադրելի գրոհ դէպի վագոնները: Բարձրանում էին պատուհաններից, որովհետև շէմքերը բռնուած էին բազմութեամբ: Ներսը իրար ջարդելու չափ լցնելուց յետոյ բարձրացան վագոնների կտուրները: Ամենքը շտապում էին, բայց մի փոքրիկ մասը միայն կարողացաւ մեզ հետ գալ: Զրկւում էին օրական հացից, գուցէ ընդմիշտ, բայց շտապում էին, կեանքը քաղցր է…

Ամենքն էլ իրար ծանօթ, բարեկամ, ընկերի մասին էին հարցնում, արդեօք կենդանի՞ է, ազատուե՞ց, այս գնացքով գալի՞ս է: Այլք սպուշ կտրած, պատմում են թէ ինչպէս չփլաւ մնացին, թողին այսքան տարիներ քրտինք թափած այդ անիծեալ վայրում ամեն ինչ՝ տուն, տեղ, հագուստ, դրամատան գրքոյկներ, նոյն իսկ դրամ: Մի շամախեցի պառաւ կին սպուշ կտրած պատմում էր, թէ ինչպէս Բալախանի մասում թուրքերը յարձակուեցան և սպանեցին երկու կաղակի ու մէկին վիրաւորեցին. և թէ ինչպէս կարողացաւ միայն հիւանդ ամուսնուն փրկել, թողնելով 3000 ր. արժողութեամբ կահկարասիք և խնայողական գանձարանի տետրակը: Մեր ծառայողներից մէկը, հորում բան անող փարպետ (КЛЮЧНИКЪ) պատմեց հետևեալը. «Մի շաբաթ առաջ երբ դրասենեակում նստած էի, մեծ փարպետը՝ Փիլին ինձ ասաց ժպտալով. Արշակ, երբ պիտի հայրենիք գնաս: Ասացի — թէ արձակուրդ տաք մէկ ամսով կերթամ, 6 տարի է ծառայում եմ և մէկ անգամ էլ չեմ գնացել արձակուրդով: Վարպետը պատասխանեց. — Երևի սպասում ես որ Բալախանին այս գետնին (ցոյց տալով) հաւասարուի և յետոյ գնաս և էլ չգաս»: Արշակը աւելացրեց. «Դու մի ասեր, որ Փիլին գիտէր, որ շուտով պիտի հաւասարուի»:

Քաղաք հասանք: Այստեղ էլ, կայարանում մեծ իրարանցում կար: Բալախանու հայ բժիշկներն ու գթութեան քոյրերից մի քանիսը իրենց սպիտակ շորերը հագին լիքն վագոններից և այդպէս էլ կանգ նստան չփոթուած: Հինգ օր է անցել այդ օրից, սակայն նոր եմ կարողացել ուշքս գլուխ-հաւաքել և գրի առնել տեսածներս: Կաշխատեմ շարունակել, քաղաքից հաղորդել: Վերջացնում էի, երբ երկու ահագին թնդիւններ լսուեցան Բարեատինսկայա փողոցում երեկոյեան ժամի 10-ին: Այստեղ մի տարճանակ է արձակուել, թուրք գօրօդովոյը ցոյց է տուել մի տուն, որտեղից իբրև թէ արձակուել է տարճանակը: Այդ տան վրայ երկու անգամ թնդանօթ պարպեցին: Տունը գերմանացի Զայցի տունն է, բնակիչներն էլ գերմանացի: Ասում են որ ինչ որ թիւրիմացութիւն կայ մէջ տեղ: Օգոստ. 26-ին զօրքը ազատել է Զաբրատում պաշարուածներին:

Բալախանու հայ զոհերի թիւը յայտնի չէ, բայց շատ չպէտք է լինի. յամենայն դէպս 50-ից ոչ աւել: Իսկ վնասները՝ ընդհանրապէս չափազանց: Բաւական է ասել որ Բալախանին պատարկուած է ու մոխիր դարձած և աւերածի վրայ հսկում են մի քանի տասնեակ վիշկաներ:

Ա. Գեանջեցեան

Բագու, 29 օգոստոսի

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ

—

Քանդել, աւերել, հրդեհել, արեան գետեր հոսեցնել շուրջը… և արարած աշխարհի առաջ հրապարակ գալ անմեղ ու անարատ, իբր բոլոր մեղքը փաթաթել արդարի շլինքին — ահա մասնաւորապէս Բագուի թուրք ինտելիգենցիայի վարմունքը ահռասարսափ Կովկասի ամենահեռաւոր անկիւնները գղրդեցնող վերջին ամիսների ընթացքում կատարուած բարբարոսական դէպքերի ժամանակ:

Դժուար, շատ դժուար կլինէր հայ մարդու ու նրա մամուլի համար աշխարհին հաւատացնելու, թէ ինքը զոհ է մոլեգնած թուրք ամբոխի բարբարոսական յարձակումներին, թէ նրա պատիւը, ստացուածքն ու կեանքը չարաչար կերպով տուժում են թուրք գազանացած ամբոխից, եթէ յանուն արդարութեան ու ճշմարտութեան նրան օգնութեան չհասնէին խղճմտանքի տէր մարդիկ իրենց գրչով, եթէ թուրք ինտելիգենցիայի արժանաւոր դաշնակից ռուս մի քանի թերթերի դէմ դուրս չգային նոյն մամուլի ուրիշ ներկայացուցիչները և չաշխատէին դէպքերը առաջ բերել իրենց իսկական գոյնով:

Այդ տեսակ ձայներից մէկն „Рус. Вѣд." լրագրի № 238-ում լոյս տեսած մի յօդուածը. դա արձագանք կարելի է համարել ռուս հասարակութեան ողջմիտ մասի, որը աւելորդ չենք համարում ամբողջովին առաջ բերել այստեղ: Ռուս լրագիրը ասում է.

«Խորին զզուանք է պատճառում Կովկասեան գործերի հետ քիչ շատ ծանօթութիւն ունեցող ամեն մի անհատին այն լուսաբանութիւնը, որը մեր, ինչպէս ասած, պահպանողական մամուլի մի քանի ներկայացուցիչները, իրենց պարագլուխ ունենալով Ռուսական Գործակալութիւնը, տալիս են Կովկասում կատարուող անօրինակելի դէպքերի մասին: Թէև „Моск. Вѣд.", „Нов. Вр." և դրանց նման թերթերի չարանախանձ վերաբերմունքը դէպի Ռուսիայի բազմաթիւ ազգութիւնները վաղուց արդէն յայտնի է, սակայն, դրանց վերջին գրութիւնները Կովկասեան դէպքերի մասին միանգամայն լցնում են համբերութեան բաժակը:

«Կովկասի, ռուսական տիրապետութիւնների այդ մարգարիտ գլխին մեծ դժբախտութիւն է եկել, այնտեղ արեան գետեր են հոսում, քաղաքները քարուքանդ են լինում գազան կտրած ամբոխի հարուածների տակ, օդը թնդում է վիրաւորուածների աղաղակներով և որբերի ու այրիների աղեխարշ արտասուքներով, հրէշային հրդեհների բոցերը լուսաւորում են աւերակների կոյտերը, որոնց տակ թաղուած են հազարաւոր կեանքեր և միլիոնների հարստութիւն, «կարմիր ծիծաղի» քրքիջները այս երկրի մի ծայրից միւս ծայրն են անցնում, մի խօսքով, ինչ որ անհաւատալի ու միանգամայն անբնական բաներ են կատարւում այդ երկրում: Երկիրը գտնւում է կատարեալ անիշխանութեան մէջ, որը սպառնում է նրան պատճառել անհամար չարիքներ, կանգնեցնելով նրա քաղաքակրթական զարգացումը շատ տարիներ: Եւ այդ դժբախտութիւնը չի կարելի մասնաւորապէս Կովկասեան անուանել, դա կրում է համառուսական բնաւորութիւն, որովհետև բունի մահուան դատապարտուած նաւթարդիւնաբերութիւնը սնունդ էր մատակարարում ամբողջ Ռուսիայի ներքին արդիւնագործութեան, նրա նաւագնացութեան և երկաթուղիներին:

«Եւ ահա այսպիսի մի ժողովրդական դժբաղդութեան պահուն, ուր մասնաւորապէս պահանջւում է ողջմտութիւն և դէպքերի ճշգրիտ լուսաւորութիւն, որոնց հիման վրայ հնարաւոր պէտք է լինի ճշմարիտ գաղափար կազմել երկրի դրութեան մասին և այդ տխրաւէտ դէպքերի առաջն առնելու միջոցներ ձեռք առնել, այդ ժամանակ, երբ հարկաւոր է կարեկից սիրտ ունենալ և անկեղծ ցանկութիւն ալեկոծուած կրքերը հանդարտեցնելու համար, — մեր «պահպանողականները» դէպքերի նկատմամբ տուած իրենց տենդենցիոզ ու անբարեխիղճ բացատրութիւններով, ընդհակառակը, բորբոքուած կրակի վրայ իւղ են լցնում այդպիսով, առանց այն էլ արդէն յուզուած կրքերը աւելի ու աւելի բորբոքելով և գրգռելով մի ազգութիւն միւսի դէմ: Պէտք չկայ փաստերի համար շատ հեռուները գնալու: Ահա թէ «Ռուսական Հեռագրկ. Գործակալ.»-ը Շուշուայ դէպքերի մասին ինչ հարկաւոր դատեց աշխարհին հրապարակել. (ռուս լրագիրը այստեղ առաջ է բերում մեր ընթերցողներին արդէն ծանօթ Բագուի այդ գործակալութեան կողմից խփուած հեռագիրը):

«Այդ խօսքերից ամեն մինը մի մի մարգարիտ է, — շարունակում է լրագիրը. — բանից դուրս է գալիս, որ տեղի ունեցած արիւնալից բոլոր դէպքերի հեղինակները հայերն են, — այդ քրիստոնեայ, խաղաղասէր և իրեն չէզոք պահող ժողովուրդը, որ ամբողջովին նուիրուած երկրագործութեան, իւր առևտրին ու արդիւնաբերութեան, և տառապող կողմը… կազմում են թուրքերը: Նոյն տեսակ մեկնութիւններ են տրուած Նախիջևանի, Երևանի և ուրիշ տեղերում տեղի ունեցած դէպքերին: Անկասկած Կովկասում կատարուող անցքերի մասին քիչ շատ ճիշտ տեղեկութիւն ունենալով որևիցէ անհատի համար «Ռուսական գործակ.»-ի կողմից հաղորդուած այդ տեղեկութիւնները միանգամայն անհեթեթ բաներ են, ճշմարտութիւնն այն է, որ կոտորածների, արիւնահեղութիւնների ու կողոպտումների առաջ բերողները մահմեդականներն են, և թէ հայերը յափշտակութիւնների ու աւարառութիւնների նկատմամբ միանգամայն անընդունակ են, և եթէ նրանք դիմում են զէնքի, — այդ անում են միմիայն իրենց ու իրենց մերձաւորների պատիւն ու կեանքը պաշտպանելու, իրենց տունն ու տեղը և ստացուածքը պաշտպանելու համար (որոնք, ՚ի մեծ ցաւ, մատնուած են եղել մահմեդական, գիշատիչ, մոլեռանդ և պերասան ու տգէտ ամբոխի ձեռքը: Շատ հասկանալի է, որ Կովկասի տեղական կենտրոնի պաշտօնեաներին անծանօթ եղող մարդկանց այդպիսի տեղեկութիւնները կարող են մոլորութեան մէջ ձգել և սխալ համոզում գոյացնել տեղի ունեցած անցքերի ու նրանց պատճառների մասին:

«Ինչ պէտք է լինէր տառապող հայերի դրութիւնը այդ տեսակ հաղորդակցութիւններ կարդալուց յետոյ, որպիսին է Շուշուայ դէպքերի մասին Ռուս. Գործ. խփած հեռագիրը: Ինչպէս կարող է պատահել, որ հայը տառապող կողմը լինելով հանդերձ, նա ինքը համարուի տեղի ունեցած դէպքերի սկզբնապատճառը?! Ո՞ւր կմնայ այլ ևս արդարութիւնն ու ճշմարտութիւնը: Ամեն բան կորցնել, զրկուել իւր մերձաւորներից ու ստացուածքից, և այդ բոլորից յետոյ լինել նաև «մեղապարտ», — այդ, իրաւի, չափազանց է: Հապա յարձակուո՞ղ կողմը: Արդեօք նման բնաւորութիւն կրող տեղեկութիւնները աւելի ևս չեն քաջալերի այդ մարդկանց՝ իրենց արարքների մէջ առաւել հեռուն գնալու: Այն րոպէին, երբ հրդեհը սպառնում է տարածուել Կովկասի հեռաւոր անկիւններն անգամ, Ռուս. Հեռագ. Գործակ.-ը աշխատում է կրքերը աւելի ևս գրգռել: Իսկ եթէ աչքի առաջ ունենանք, որ Ռուս Գործ. Բագուի գործակալը «Каспій» լրագրի խմբագիրն է, և թէ այդ լրագիրը հանդիսանում է համիսլամականութեան գլխաւոր միջնաբերդը — այդ ժամանակ ամեն բան հասկանալի կդառնայ: Հետևաբար, Ռուս Հեռագր. Գործակալութեան բերանով խօսում են համիսլամութեան գլխաւոր գործիչները, այսինքն այն շարժման պարագլուխները, որ սպառնում է նորանոր անթիւ չարիքներ պատճառել:

«Ամենամօտ արգելքը, որին ընդհարուեց համիսլամականութիւնը — հայերն էին, որոնք մշտապէս ձգտել են դէպի Ռուսիան, և հէնց այդ է պատճառը, որ նրանք եղել են առաջին վնասուողները: Եթէ այդ կորստաբեր շարժման առաջը չաշխատել ժամանակին առնել, նման փորձանքների ենթակայ են նաև քրիստոնեայ միւս ժողովուրդները: Համիսլամականութիւնը կրում է կրօնական-քաղաքական գաղափարական բնաւորութիւն, սակայն թուրք ամբոխին հասկանալի դարձնելու և նրա վրայ ազդելու համար, համիսլամականութեան գործիչները աշխատել են օգտուել ամբոխի գազանական ստոր բնազդներից, բանալով նրա առաջ յափշտակելու և կողոպտելու ընդարձակ ճանապարհ — և հէնց դրանով պէտք է բացատրել մահմեդականների կատարած անթիւ կողոպտումներն ու յափշտակութիւնները, որոնք առաջ են բերել հարիւրաւոր միլիոնների վնասներ»:

ՅԱՆՑԱՒՈՐՆԵՐԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆ

—

Մայրաքաղաքի զանազան թերթերում տպագրուած են հետևեալ հեռագրերը.

ԲԱԳՈՒ, 30 օգոստոսի. — Հայ-մահմեդական ընդհարումներին վերաբերեալ Թիֆլիսից ձեր գործակալների ուղարկած հաղորդագրութիւնները, որոնք լի են ստայօղ և նպատակաւոր տեղեկութիւններով թշնամի կողմերից մէկի դէմ, կարող են միայն մոլորեցնել ընթերցող հասարակութեանը այդ անցքերի իսկական բնաւորութեան վերաբերմամբ: Այդ հաղորդագրութիւնների նպատակաւորութիւնը պարզ երևում է հէնց միայն այն բանից, որ բարձր իշխանութիւններն ինչպէս Բագւում, այնպէս և Շուշում, այլ և պաշտօնական հաստատութիւնները մի շարք վաւերական փաստերով հաստատել են, որ նոր պայթած կռուի ոչ թէ միայն ձեռներէցութիւնը պատկանում է հայերին, այլ և նրանք վաղուց և սիստեմատիքաբար նախապատրաստում էին այդ բանին: Այս պատճառով թախանձագին խնդրում ենք, որ խիստ զգուշութեամբ վերաբերուէք այդ հաղորդագրութիւններին, որովհետև դրանց բնաւորութիւնից պարզ կերպով կարելի է տեսնել, որ ձեր գործակալներին մոլորեցրել են հայերը:

Նախագահ Բագուի մուսուլմանների:

Բագու, 30 օգոստոսի. — «Сынъ Отечества»-ի № 161-ում կարդալով Պոնոմարեօվի «Շուշու և Բագուի անցքերի վերաբերմամբ» յօդուածը, մենք խորապէս զայրացած ենք այն նպատակաւոր և պարզ զրպարտիչ խօսքերից, որ նա ուղղել է ընդհանուրի յարգանքը վայելող մուսուլման գործիչների — յայտնի բարեգործ Թաղիևի, «Каспій»-ի և «Հէյաթ»-ի խմբագիրներ Թոփչիբաշևի և Աղաեւի դէմ: Նա ուզում է ռուս հասարակութեան առաջ ձգել մուսուլման գործիչների և առհասարակ մուսուլմանների վարկը, և այդ բանը հասկանալի կլինի, եթէ ի նկատի առնենք, որ Պոնոմարեօվը երկար ժամանակ եղել է հայկական «Баку» լրագրի խմբագիր և ուղարկուած է Պետերբուրգ բացառապէս մուսուլմանների դէմ ագիտացիա անելու նպատակով, ապրելով հայերի նպաստներով և հանդիսանալով իբրև հայոց ագենտ: Պոնոմարեօվը կանխակալ դիտաւորութեամբ մոլորեցնում է ռուս մամուլը և հասարակութեանը, պնդելով, թէ Շուշում և Բագւում կոտորածը մուսուլմաններն են սկսել, իսկ հայերը միայն պաշտպանւում էին: Այս յաւակնութեան սուտութիւնն ու նպատակաւորութիւնն ափաշքարայ երևում է թէկուզ հէնց այն բանից, որ բարձր իշխանութիւնները ինչպէս Բագւում, այնպէս և Շուշում, այլ և պաշտօնական բոլոր հաստատութիւնները մի շարք վաւերական փաստերով հաստատել են, որ նոր պայթած կռուի ոչ թէ միայն նախաձեռնութիւնը պատկանում է հայերին, այլ և նրանք վաղուց և սիստեմատիքաբար նախապատրաստում էին այդ բանին: Այդ բանը կարելի է տեսնել Բագուի իշխանութիւնների պաշտօնական զեկուցումներից և ընդհանուր-նահանգապետի խօսքերից, որ նա ասել է իրենց հայերին:

Բագուի մուսուլմաններ.

—

Բագուի մուսուլմանների նախագահին եւ Բագուի մուսուլմաններին մենք կարող պատասխանել Պռոմեթէոսի խօսքերով. «Արամազդ, դու բարկանում ես, կնշանակի՝ մեղաւոր ես», և մէկէլ հայկական հետևեալ հանրածանօթ առածով. «Աղուէսին իւր պոչը վկայ կանչեց»:

—

Մուսուլմանների վերոյիշեալ երկու հեռագիրը տպագրել է նաև «Русь» լրագիրը (№ 206) մի ծանօթութեամբ, ուր մէջ, ասում է, ի միջի այլոց, հետևեալը.

«*Բագուի մուսուլմաններ* լաւ են անում, որ դիմում են ռուս մամուլին, իբրև բարեխիղճ մի ինտելիգենցիայի, Կովկասի ազգութիւնների ներկայ դժուարին պայքարի գործում: Բայց նրանց ինքնապաշտպանութեան ձևն ընդունակ է (ասում ենք այս կատարեալ անկեղծութեամբ) միայն զայրացնել և կատաղեցնել:

«Ծանր մեղադրանքներ բարձելով հայերի, Պետերբուրգի լրագրների թղթակիցների (մուսուլմանների հեռագրերն ուղարկուած են, ինչպէս այդ երևում է նրանց հասցէներից, ինն լրագրների խմբագրութիւնների) և մասնաւորապէս պ. Պոնոմարեօվի վրայ, նրանք հանդէս են եկել անունի վահանով պաշտպանուած: Առաջին հեռագրի տակ էլի գրուած է *Նախագահ Բագուի մուսուլմանների* ստորագրութիւնը, — առաջին անգամն ենք լսում այդպիսի մի կոչում և կարող ենք միայն գուշակել, որ այդ կոչումը կրում է ոչ այլ ոք, եթէ ոչ երկրորդ հեռագրի մէջ փառաբանուող «յայտնի բարեգործ», նոյնը քաղաքային հողերի զաւթող և ամբողջ Բագուի կրեդիտոր Հաջի-Զէյնալ-Աբդին-Թաղիևը: Բայց երկրորդ հեռագրի տակ դրուած է արդէն բոլորովին անանուն *Բագուի մուսուլմաններ* ստորագրութիւնը, իսկ պ. Պոնոմարեօվի վրայ խիստ մեղադրանքներ են բարձւում. ուրեմն ո՞ւմ նա դատի կանչի զրպարտութեան համար: Եթէ *Բագուի մուսուլմաններ* ստորագրողները վստահ էին իրենց խօսքերին, նրանք պէտք է ստորագրէին իրենց անունները: Իսկ այժմ ոչ նրանց մի մազի չափ անգամ չի հաւատալ, և նրանք իրենք զրոյի են հաւասարեցրել ռուս մամուլին արած իրենց կանոնաւոր դիմումը: Առ այժմ մենք գործ ունինք այն անանուն լեգենդայի հետ, թէ թուրքերը չեն, այլ հայերն են ներկայ կոտորածի պատճառը: Գուցէ ռուսական արտիլերիայի դէմ կռուողն էլ թուրքերը չեն, այլ հայե՞րը: Բագուի թուրք-մուսուլմանների ձայնը կարող էր գնահատելի վկայութիւն լինել, բայց ո՞վ է հաւատում անանուններին»:

—

Նոյն հեռագրերի առթիւ «Сынъ Отечества»-ն գրում է (№ 171).

«Անանուն հեղինակները, որոնք խոհեմաբար ծածկուել են «Բագուի մուսուլմաններ» ստորագրութեան տակ, լակէյի պէս խոնարհուելով «յայտնի բարեգործ Թաղիևի» առաջ, նոյն լակէյի անպատկառութեամբ քսմնելի մեղադրանք են շպրտում մեր աշխատակից Կ. Մ. Պոնոմարեօվի հասցէին, որ նա, իբր թէ, «ուղարկուած է Պետերբուրգ բացառապէս մուսուլմանների դէմ ագիտացիա անելու նպատակով, ապրելով հայերի նպաստներով և ներկայանալով իբրև հայոց ագենտ»: Հաստատելով, որ Կ. Մ. Պոնոմարեօվը Բագուից տեղափոխուել է Պետերբուրգ բացառապէս «Сынъ Отечества-ի խմբագրութեան հրաւիրանօք և, հետևաբար, ոչ ոքի կողմից «ուղարկուած» չի եղել, մենք, ընդամին, «Բագուի մուսուլմանների» հեռագիրն ընդունում ենք իբրև ամենալաւ ապացոյցը այն բանի, որ այն բոլորը, ինչ որ գրել է մեր լրագրի մէջ Կ. Մ. Պոնոմարեօվը, անպայման ճշմարիտ է: Մենք այժմ ամենևին չենք կասկածում, որ չկայ այնպիսի մի ցածութիւն, որին ընդունակ չլինէին այնպիսի բարոյական յատկութիւնների տէր մարդիկ, որպիսի յատկութիւններ ցոյց են տուել Բագուի հեռագրի անանուն հեղինակները: Եւ չափազանց տխրաւէտ բան կլինէր, եթէ այդ հեղինակներն իսկապէս «Բագուի մուսուլմանները» լինէին ընդհանուր առմամբ, և ոչ թէ նրանց տականքի մի աննշան մասը:

Ուզում ենք հաւատալ, որ Բագուի մուսուլմաններից նրանք, որոնք օրինաւոր, մաքուր և ազնիւ մարդիկ են, հեռագրի հեղինակների կողմը չեն լինելու և նրանց գրպարտութեանժալթքումին կվերաբերուեն խորին զզուանքով:

«Մենք, այնուամենայնիւ, պէտք է խիստ շնորհակալ լինենք Բագուի փախկոտ և միևնոյն ժամանակ անյայտ անանուններին. նրանց հեռագիրն էական ծառայութիւն մատոյց ռուս հասարակութեանը, որին նա կօգնէ հասկանալու, թէ մեր պարբերական մամուլի օրգաններից որն ինչ է: Մեր ստացած հեռագրի պատճէններն ուղղուած էին ուրիշ ութ խմբագրութիւնների: Դրանցից, սակայն, երկու լրագիր միայն, որոնք այնքան ազնւութիւն չունեցան, որ չտպէին անանուն ցածութիւնը կամ տպէին գէթ հարկաւոր վերապահումով: Այդ երկու լրագիրը նախ, ի հարկէ, «Новое Время»-ն է, երկրորդ... «Слово»-ն...»:

Ինքը պ. Պոնոմարեօվը «Сынъ Отечества»-ի նոյն համարում զետեղել է հետևեալ նամակը. «Հնարաւորութիւն չունենալով հրապարակ հանելու սև հարկերեակի այն անանուն տպետներին, որոնք ծածկուել են «Բագուի մուսուլմաններ» կեղծանուան տակ, ես դատական պատասխանատւութեան եմ կոչում մամուլի մէջ ինձ զրպարտելուն համար «Новое Время»-ի խմբագիր Փ. Ա. Բուլգակովին, Մ. Ա. Սուվորինին և «Слово»-ի խմբագիր Պ. Լ. Բլկովին, որոնք հնարաւոր են համարել իրենց լրագրներում անանուն ցածութիւն տպել, որով և իրենց վրայ են առել պատասխանատւութիւնն այդ ցածութեան բովանդակութեան համար: Կոնստ. Պոնոմարեօվ»:

«Сынъ Отечества»-ի դարձեալ նոյն համարում տպուած է երդ. հաւատ. Ալ. Բ. Սարիբէկեանի մի նամակը ուղղուած պ. Պոնոմարեօվին, որին նամակագիրն իւր համակրանքը յայտնելուց յետոյ գրում է.

«Աւելորդ չեմ համարում աւելացնել, որ այսօր ես, իբրև Բագուի խաղաղարար մասնաժողովի անդամ, հետևեալ հեռագիրն ուղարկեցի նոյն մասնաժողովի նախագահ Քեամիլ-բէկ Սաֆարալիևին. «Խորին զզուանքով կարդացի ես Պետերբուրգի մի քանի լրագրներում երկու հեռագիր «Բագուի մուսուլմաններ» և «Նախագահ Բագուի մուսուլմանների» անանուն ստորագրութիւններով: Ոչ թէ կրքերը վառելով և ոչ թէ քամահելի ստութիւնով կարելի է վերջ տալ հայերի և թուրքերի արիւնահեղ պատերազմին, այլ միայն հանդարտութեամբ վերաբերուելով գործին և բացայայտելով այն բազմազան ու լուրջ պատճառները, որոնց հետևանքը հանդիսանում է արիւնահեղ պատերազմը. մարդասիրութեան, պետական օրինականութեան և երկրի խաղաղ կուլտուրական բարգաւաճման շահերի համար, անհրաժեշտ է պարզաբանել այդ պատճառները և վերացնել մի անգամ ու միշտ: Ռուսաց երկիրը և ռուս հասարակութիւնն անկեղծօրէն կարօտ է գործի անկողմնակալ և կատարեալ պարզաբանութեան, մինչդեռ յիշեալ հեռագրները մեղանչում են ոչ թէ միայն անցքերի ճշմարտութեան դէմ, այլ և լի են քամահելի ստութիւնով պ. Կ. Պոնոմարեօվի հասցէին: Յիշեցնում եմ ձեզ, որ Բագու քաղաքի խաղաղարար մասնաժողովի նիստերից մէկում բարձրաձայն յայտարարուեց, որ «հայկական» ոչ մի լրագիր Բագու քաղաքում չի հրատարակւում. ուրեմն ինչպէս է, որ անանուն մուսուլմանները պնդում են, թէ պ. Պոնոմարեօվը հանդիսանում է Բագու քաղաքում հրատարակուող «հայկական լրագրի» ագենտը և ինչի՞ վրայ է հիմնուած այն մեղադրանքը, թէ պ. Պոնոմարեօվը Պետերբուրգ է ուղարկուած հայերի կողմից և ապրում է հայոց նպաստներով: Դա վրդովեցուցիչ և քամահելի ստութիւն է, եթէ աւելին չասեմ, և ես կարծում եմ, որ ձեր և խաղաղարար մասնաժողովի պարտքն է, եթէ այդ մասնաժողովը դեռ ևս գործում է, հերքել այդ բոլորը և մերկացնել անանուններին»:

ՔՐՈՆԻԿՈՆ

սեպտ. 1-ին —Ս. Պետերբուրգում զինուորական գլխաւոր դատարանում, դռնբաց քննւում էր Քութայիսի նահանգի բնակիչներ Թեվզաձէի և Նիկոլայշվիլու գործը, որոնք Թիֆլիսում անուշեղէնի խանութ ունեցող Ալիխանեանին սպանելու համար Թիֆլիսի նահանգական-զինուորական դատարանի վճռով դատապարտուած էին՝ մահուան պատժի կախաղանի միջոցով: Սակայն, ի նկատի ունենալով դատապարտեալների անչափահասութիւնը, զարգացումից զուրկ լինելը և թեթևամտութիւնը, որոշուած էր դատավճիռը ներկայացնել փոխարքայի բարեհայեցողութեան: Զինուորական բարձր դատարանին իւր տուած վճռաբեկ բողոքի մէջ Թեվզաձէն գործուած ոճիրը վերագրում էր բացառապէս իրեն և խնդրում էր, որ բարձր դատարանը փոխէ դատավճիռը Նիկոլայշվիլու վերաբերմամբ յայտարարելով, որ վերջինս բոլորովին անմեղ է: Նիկոլայշվիլին իւր կողմից յայտարարում էր, որ ինքը ոչ մի մասնակցութիւն չի ունեցել Ալիխանեանի սպանութեան գործում: Բարձր դատարանի դատախազի օգնականը մատնանշ արաւ այն բանը, որ վճռաբեկ բողոքները չեն վերաբերում գործի էականին և պահանջեց այդ բողոքները թողնել առանց հետևանքի: Բարձր դատարանն այդպէս էլ վճռեց: («С. От.»):

Կովկասի փոխարքայի խորհրդի մէջ հայոց հոգևոր բարձր իշխանութեան ներկայացուցիչ Նահապետ եպիսկոպոսի մասնակցութեամբ քննւում էր եկեղեցապատկան գոյքերը վերադարձնելու խնդիրը: Մշակուած ծրագրի համաձայն, յիշեալ գոյքերը վերադարձնւում են այն ցուցակներով, որոնք կազմուած էին 1903 թուին նոյն գոյքերը յարքունիս գրաւելիս, և նոյն կարգով, ինչ կարգով որ գրաւուած էին: Այդ ծրագիրն ուղարկուած է ներքին գործերի մինիստրին ի հաստատութիւն:

—Ժամհարեան եղբայրները, ինչպէս հաղորդում են մեզ, 10,000 պուդ ալիւր են ուղարկել Շուշու կարօտեալ հայերին: Բացի դրանից, նրանք մի խոշոր գումար են յատկացրել Շուշու հայոց աւերուած տները վերաշինելու համար:

—Թիֆլիսի առաջնորդարանից այս օրերս 38 հակ հագուստեղէն է ուղարկուած Նախիջևանի արկածեալներին բաժանելու համար: Այդ հագուստեղէնը հաւաքուած է տեղական հայ ժողովրդից ծխական քահանաների միջոցով:

—Բագւում սպասւում են Վեհ. Կաթուղիկոսի ներկայացուցիչը և շէյխ-ուլ-իսլամը թշնամացած կողմերը հաշտեցնելու համար:

—Բագուի անկարգութիւնների ժամանակ, օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 4-ը, բանտարկուած են 293 հոգի, որոնք մեղադրւում են հրացէն պարպելու, զէնք կրելու և գողութեամբ ու թալանով զբաղուելուն համար:

—Բագուից Պետերբուրգում տեղեկութիւն է ստացուած, որ ապահովագրական ընկերութիւնները հրաժարւում են վճարել ժողովրդական խառնակութիւններից առաջացած վնասները:

—Բաթումում, «Нов. Об.»-ի ասելով, լուր է պտտում, որ Կենդերլինսկու սպանութեան համար ձերբակալուած անձը բոլորովին անմեղ է. իսկական սպանողները, ինչպէս հաւատացնում են, Բաթումում էին գնացել հանգուցեալի հետ և ամբողջ ճանապարհին, ինչպէս և Բաթումում, շարունակ հետևում էին նրան: Սպանութիւնը կատարելուց յետոյ, նրանք ատրճանակներ էին պարպել, որից մերձակայ հասարակութիւնը փախուստ էր տուել սարսափահար: Փախչողների մէջ էր եղել նաև այն անձը, որին յետոյ բռնել էին և որը սպանութեան ժամանակ, ինչպէս ասում են, նստած է եղել մերձակայ սրճարանում:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՆՈՐ ԲԱՅԱԶԻՏԻՑ.—Տեղումս Պ. Ս. Բաստիկեանի անունով գոյութիւն ունեցած գրատուն-ընթերցարանը բոլորովին անմխիթար դրութեան մէջ է: Չկայ ոչ մի որոշ աղբիւր նրա ծախսերը հոգալու համար, ընթերցանութիւնը ձրի լինելու և անդամավճարները աննշան լինելու պատճառով, տեղիս երիտասարդութիւնը դիմում է զանազան միջոցների գրադարանն ապահովելու համար: Այդ միջոցներից մէկն էլ այն է, որ ընթերցարանի դահլիճում դրուած է մի կնքուած փակ թիթեղեայ արկղիկ, որի մէջ հաւաքւում են ընթերցասէր հասարակութեան կամաւոր նուէրները, որտեղ արդէն բաւական մեծ գումար էր ժողովուել. սակայն այդ գումարը իւր իսկական նպատակին չծառայեց. այսպէս, օգոստ. 28-ին գրադարանապետի բացակայութեան ժամանակ, անյայտ «ընթերցասէր»՝ կոտրելով յիշեալ արկղը, գողանում է նրա միջի գումարը, և երևի այժմ օրհնում նուիրատուներին: Ահա թէ դեռ ինչ թանձր խաւարի մէջ է խարխափում Նոր Բայազիտը... աւելորդ չենք համարում յայտնել, որ եթէ չլինեն կողմնակի նուիրատուներ, կամ մուտքի մի որոշ աղբիւր, պէտք է սպասենք, որ շուտով զրկուելու ենք այնպիսի մի օգտակար հիմնարկութիւնից, որպիսին է մեր թերթերով և լրագրներով հարուստ գրադարանը. յուսանք և սպասենք...

ԹՈՓՏԻ գիւղից (Ն.-Նախիջ. գաւ.).—Օգոստոսի 28-ին տեղս եկաւ պ. Մինաս Բերբերեանը ժողովրդական ընթերցարանի բացումը պաշտօնապէս յայտարարելու համար:—Ընթերցարանը բացւում է շրջանիս ժողովրդի դաստիարակութեան կոմիտէի նախաձեռնութեամբ, տալով նպաստ որքան կը հարկաւորուի տարեկան ծախսերի համար. վարձուած է մի տուն իւր յարմարութիւններով գիւղի կենդրոնում: Այդ առթիւ հաւաքուած էր ժողովրդի բազմութիւն. մաղթանքի կատարումից յետոյ պ. Բերբերեանը գիւղացուն հասկանալի լեզուով բացատրեց այդ նոր հաստատութեան կարևոր նշանակութիւնը, մատնացոյց անելով գիւղական ուրիշ շատ այն կարիքները, որոնց շնորհիւ գիւղացին միշտ տառապանքների է ենթարկւում: Պ. Բերբերեանը, որ սրանից մի քանի տարի առաջ «Նոր-Դար»-ի էջերում կոչ էր անում «գիւղասիրաց ընկերութեան» կազմակերպութեան համար, այսօր գիւղ է իջել և գիւղացի երիտասարդների հետ զրոյց է անում: Որքան ախորժելի էր տեսնել, թէ նա ինչպէս շրջապատուած հետաքրքիր գիւղացիներով, ներկայ նորութիւնների մասին մանրամասն տեղեկութիւններ էր հաղորդում, և ինչպիսի՜ յափշտակութեամբ լսում էին նրան գիւղացի ունկնդիրները: Ցանկալի էր, որ այսպիսի այցելութիւններ մեզանում կրկնուէին, մանաւանդ թեմական առաջնորդի և փոխանորդի կողմից:

ՌՈՒՍԻԱՅԻ ԹԵՐԹԵՐԻՑ

«Echo de Paris»-ի Պետերբուրգի թղթակիցը խօսակցութիւն է ունեցել մի բարձրաստիճան պաշտօնեայի հետ Բագուի անցքերի մասին: Այդ բարձրաստիճան պաշտօնեան ասել է, ի միջի այլոց, թէ Բագուի անկարգութիւններն այն հետևանքը կարող են ունենալ, որ ընտրողական օրէնքի մէջ փոփոխութիւն կմտցուի բանուորներին Պետական դումային մասնակցելու իրաւունք տալու իմաստով: Շատ կարելի է նմանապէս, որ լուրջ միջոցներ ձեռք առնուեն բնակչութիւնը խաղաղեցնելու և քաղաքացիների անձնական անձեռնմխելիութիւն ապահովելու համար: («С. От.»):

—Լոձի բոլոր դպրոցները տեղական ժողովրդական դպրոցների վերատեսչից մի հրահանգ են ստացել, որով յայտարարւում է, թէ վերացուած են վարչական այն բոլոր կարգադրութիւնները, որոնց զօրութեամբ լեհացի աշակերտներին արգելւում էր դպրոցների մէջ դասամիջոցներին խօսել իրենց մայրենի լեզուով և բոլոր առարկաները պէտք է աւանդուէին բացառապէս ռուսերէն լեզուով: («Р. Сл.»):

—Շուտով հրատարակուելու են Պետական Դումայի կանոնադրութեան լրացուցիչ կանոններ ընտրողական ժողովների և ընտրութիւնների մասին: Այդ կանոնների համաձայն, պարտադիր չէ, որ ոստիկանութիւնն անպատճառ ներկայ լինի ժողովներին և ժողովներում քննուելիք հարցերի ծրագիրն էլ բաւական ընդարձակւում է:

—Այս օրերս տեղի ունեցած մինիստրների մասնաւոր խորհրդակցութեան մէջ մեծամասնութիւնն այն միտքն յայտնել, թէ պէտք է կարելոյն չափ շուտով վերացնել ուժեղացրած պահպանութեան դրութիւնները, նմանապէս և այն ընդարձակ լիազօրութիւնները, որոնք դրուած են տեղական իշխանութիւններին՝ պատժելու, խուզարկութիւններ կատարելու և դատ յարուցանելու վերաբերմամբ: Խուզարկութիւններ կատարելու և ձերբակալելու ձևականութեան վերաբերմամբ ցանկութիւն է յայտնուած, որ այդ բանը կատարուի դատական պաշտօնեայի ներկայութեամբ: Այս բանն առանձնապէս պնդել է արդարադատութեան մինիստր Մանուխինը: Խորհրդակցութեան մասնակցողներից մէկը, սակայն, յայտարարել է, թէ արտակարգ միջոցների վերացումով դժուար է երաշխաւորել, որ երկրի անդորրութիւնը պահպանուի: Հետևանքն այն է եղել, որ նա յետ է առել իւր առաջարկը: Ուրեմն դրութիւնը կմնայ նոյնը:

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Որ թերթն էլ բաց ես անում, տեսնում ես ընդարձակ էջեր՝ նուիրուած այն ահռելի անցքերին, որոնք ներկայումս տակն ու վրայ են արել մեր երկիրը: «Разсвѣтъ»-ի մէջ Սէրգէյ Սալոմին գրում է.

Կովկասը հրդեհուել է բոլոր ծայրերից թէ բառացի և թէ փոխաբերական մտքով: Նաւթային գործը կործանւում է, և հնարաւոր է, որ օտարերկրեայ միջամտութիւն լինի ոչ-ռուսահպատակների կեանքի և գոյքի պաշտպանութեան համար: Ազգայնական կրքերը եռում են: Բանուորական շարժումը խիստ սուր բնաւորութիւն է ստացել, ագրարային շարժումը չէ դադարում... Ես հեռու եմ Կովկասի ազգայնական բարդ խնդիրը քննելու փորձ անելու մտքից: Կարծում եմ, աւելորդ է կրկնել այն, ինչ որ շատ անգամ գրուել է այդ երկրում մեր հնացած քաղաքականութեան և նոյն երկրի վարչական կազմակերպութեան մասին:

Ինքը կեանքն մամուլի մէջ եղած ամէն տեսակ մեկնաբանութիւններից աւելի լաւ պատասխանեց այն հարցին, թէ ինչ է այդ քաղաքականութիւնը և Կովկասի վարչական կազմակերպութիւնը: Աւելի լաւ մերկացում չէր կարող լինել: Բիւրոկրատիան հնձում է այն, ինչ որ ցանել է:

[illegible] կարելի է կռահել մերձական, առանց մանրամասն խորը գնալու: Այսինքն՝ ինչ է կատարւում իսկապէս Կովկասում: Անտեղից փոքր ի շատէ հաւաստի տեղեկութիւն խիստ քիչ ունենք:

Այսպիսի մի բան որ պատահէր ոչ-Ռուսաստանում, անմիջապէս երկիրը կը հեղեղուէր թղթակիցներով: Լրագրները լի կլինէին մանրամասն տեղեկութիւններով, գնահատութիւններով, պատմութիւններով: Իսկ մեզանում կան միայն երկու գործակալութեանց հեռագրները, որոնց արժէքը լաւ գիտենք, մէկ էլ պատահական թղթակցութիւններ և մասնաւոր նամակներ ու լուրեր շատ անգամ անհեթեթ ու անհաւանական:

Ես հարցրի մի քանի լրագրների խմբագրութիւններում այդ անտարբերութեան պատճառը: Պատասխանը մէկ էր. թղթակից ուղարկելու համար պէտք է մեծ փող ծախսել, բայց որ յանկարծ արգելեն գրել... Իսկական ռուսական այս պատճառաբանութեան դէմ առարկելու հարկ չկայ: Ցաւօք, կարելի չէ փող ծախսել «Կովկասեան նամականիքի» վրայ, որոնք թերևս լոյս տեսնեն «Русская старина»-ի մէջ 1925 թուին:

Մնում է օգտուել այն բանից, ինչ որ տալիս է այժմ մամուլը:

Ամենաառաջին հարցն այս է. ո՞վ ում դէմ է ապստամբել և ո՞ւմ դէմ է կռւում իշխանութիւնը:

Պատասխան չունենք: Թուրքերը կռւում են հայերի դէմ, զօրքերի դէմ և ռուս բանուորների դէմ: Հայերը կռւում են թուրքերի և զօրքերի դէմ: Ռուս բանուորները կռւում են թուրքերի և նոյնպէս զօրքերի դէմ: Զօրքերը հրացան և թնդանօթ են արձակում ամենքի դէմ:

Դէ, եկէք ու հասկացէք, թէ իսկապէս ո՞ւմ են ճնշում, ո՞վ է ճնշողը, ո՞վ բարեկամը, ո՞վ է բռնադատողը և ո՞վ վնասուողը, որին պաշտպանում են:

Ռուս ընթերցողն այս բանը հասկանալ չի կարող,—և առհասարակ ո՞վ կարող է լուծել Կովկասեան չարաբաստիկ առեղծուածը:

Ասում են. սպասեցէք, պաշտօնեայ կուղարկեն, նա ամէն բան կքննի և զեկուցում կգրի..

Բայց մանրամասն զեկուցում մինչև այժմ էլ դեռ չկայ Բագուի առաջին կոտորածի մասին ևս, և այդ կոտորածի գաղտնիքը գաղտնիք էլ մնաց, թէև մի քանի ամիս է անցել:

Իսկ այստեղ ժամանակը չի սպասում: Ամեն մի նոր օր նոր սարսափելի տեղեկութիւն է բերում: Արիւնը հոսում է գետի պէս, սպանուածների և վիրաւորների հաշիւը չկայ, տները քանդւում են թնդանօթների ռումբերով...

Ազգայնական կռիւը մութ քօղով ծածկում է իսկական դրութիւնը, և այդ արդարացուցիչ քօղի տակ արդէն չես հասկանում, թէ ում և ինչու են սպանում:

Մի բան պարզ է. ոչ ոք չի կարող հաւատալ, թէ կովկասեան դրամայի պատճառները տեղական և պատահական են, և եթէ Կովկասը ծածկուել է ամբողջովին արիւնոտ վէրքով, ապա այդ վէրքը ընդհանուր հիւանդ օրգանիզմի վրայ է:

Ինչպէս յայտնի է, պետական դումային մասնակցելու գործից ամենայն խնամքով հեռացուած է, ի միջի այլոց, ինտելիգենցիան իւր ահագին մեծամասնութեամբ՝ որովհետև այդ մեծամասնութիւնը ոչ սեփական կալուածներ ունի և ոչ այնքան կարողութիւն, որ թանկ բնակարաններում ապրի: Այս առթիւ Մ. Մենշիկովը «Нов. Вр.»-ի մէջ նկատում է դառնութեամբ.

Օրէնսդրական կեանքի վերաբերմամբ ես ազգի անդամ չեմ, ես ոչինչ եմ և նոյն իսկ աւելի վատ, քան ոչինչ: Եթէ ես բոլորովին ոչինչ լինէի, ինձնից ամէն օր զգալի տուրքեր չէին առնիլ, ինձ ու որդոցս չէին տանիլ պատերազմ: Ոչինչ լինելը վիրաւորական չէ, բայց լինել անշունչ առարկայ, որից օգտւում են, առանց նրա կարծիքը հարցնելու—սա վիրաւորական է: Ես հասկանում եմ, երբ ներկայացուցչութեան իրաւունքից զրկւում են ոճրագործներին, անչափահասներին, օտարերկրացիներին, թափառական օտարացեղերին և այլն: Բայց ես թափառական օտար ցեղի մարդ չեմ, օտար երկրացի չեմ, ոճրագործ չեմ: Բացատրեցէք Աստծու սիրուն, ինչո՞ւ որևէ պանդոկի տէրն ընտրութեան իրաւունք է ստացել, իսկ նրա հարևանը, որ եւրոպական հռչակ ստացած գիտնական է, չի ստացել այդ իրաւունքը: Եւ ինչ է իսկապէս Պետական Դումա—բնակարանների թէ մարդկանց ժողով: Ո՞վքեր են կանչւում օրէնքներ դնելու— հողաբաժինները թէ ուղեղները: Եթէ «дума» խօսքը «думать» բայից է, եթէ նրա գործը պէտք է մտածում լինի, որի համար պահանջւում է խելք ու գիտութիւն, ապա ինչպէս բացատրենք, որ ընտրութիւնից հեռացուած է այսպէս անուանուած ռուս ինտելիգենցիան գրեթէ ամբողջապէս:

Բացատրութիւնը շատ պարզ է.—ինտելիգենցիան է բոլոր «չարիքների» աղբիւրը... Խեղճը առանցուեց, չարչարուեց, մինչև որ կարողացաւ Եւրոպական պարլամենտի դէմ լոկ անունը յիշեցնող մի հաստատութիւն մտցնել տալ Ռուսաստանում և այժմ, երբ նա փլաւն եփել [illegible] է, չգրու թոյլ չեն տալիս, որ համը ճաշակի: Ասենք, մի համ էլ չի տեսնելու, բայց էլի—վիրաւորական է:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՄԱՒԻՐ, 1 սեպտեմբերի.—Օգոստոսի 27-ին, օրուայ ժամը 1-ին Արմաւիրից անցաւ Պարսից Մուզաֆֆէր էդդին շահը: Արմաւիրի կայարանում մնաց կէս ժամ: Թէպէտև հաւաքուած էր հետաքրքրուողների ահագին բազմութիւն, բայց ընդունելութիւնը սառն անցաւ: Կարգադրիչներն անշնորհք գտնուեցին բարձր հիւրին արժանավայել շքով ընդունելու: Երբ գնացքը կանգ առաւ, մի 10 րոպէի չափ Պարսկաստանի պետը սալոն-վագոնի պատուհանից տխրադէմ մտիկ էր տալիս դուրսը հաւաքուած խուռն բազմութեան, որը բաւական ոչ մի ցոյց չարեց, այլ անմիտ հետաքրքրութեամբ, գլուխ-գլխի հեծնելով դիտում էր նրան: Վագոնում ներկայացաւ տեղիս ատաման Պ. Վարտանեանը. դրանից յետոյ միայն, այն էլ կայարանի յետևից լսելի եղաւ մուզիքի ձայնը, որ եղանակում էր պարսկական մարշը: Կարգադրիչները երևի թէ զգացին իրենց սխալը՝ մուզիքը բերել տուին պլատֆորմի վրայ՝—վագոնի դիմաց նուագելու:—Հայ պատգամաւորութիւնը շահի թիկնապահի միջոցով միայն կարողացաւ ներկայացնել ազատահայ և ուղերձ՝ ֆրանսերէն գրած: Շահը մնաց վագոնում հանգստանալու, իսկ նրա պալատականները կայարանում ընդունեցին հասարակութեան պատրաստած նախաճաշը: Վեհափառ շահի տրամադրութիւնը վատ էր. անշուշտ Բագուի Շուշու, նաև Կովկասեան դէպքերն ու վէրքերը վրան վատ էին ազդել. բնական էր այդ տխրութիւնը՝ քանի որ Կովկասում միմեանց թշնամացած թուրք և հայ տարրը իւր երկրում էլ գոյութիւն ունի, մէկն իրեն հաւատակից, միւսն իրեն հաւատարիմ. ո՞րի կողմը պահէ, ո՞րին արդարացնէ—չգիտէ: Այո՛, Կովկասեան տարեգրութեան մէջ եղած բարբարոսութիւններից վերջին կոտորածները գերազանցում են իրենց խայտառակութեամբ և յայտնի էլ չէ՝ թէ երբ պէտքէ վերջանան: Այնքան կարդացինք, այնքան լսեցինք, որ սովորական բան դարձաւ. Տառապող հայութեան [illegible] աղաղակը, նրա լաց ու կոծի ձայնն այլևս արձագանք չեն գտնում մեր սրտերում, չեն խղճահարում մեզ. մեր զգացմունքները բթացել են, կարծես մարդ չենք, խիղճ չունենք: Տեսէք մեր Արմաւիրը, որ փորձանքներից ազատ է, որ միլիոնների կարողութիւն ունի, գրեթէ ոչինչ չօգնեց իւր մնացած արիւնակիցին, իւր հարևան քաղաքացուն, ծով վէրքերով շրջապատուած հայ գիւղացուն...

Ամէնևին չենք հարցնում մեզ, թէ ո՞վ ենք մենք և ինչո՞ւ ենք ապրում աշխարհում, ո՞ւմ համար ենք դիզում մեր ոսկիները—եթէ այսպիսի կարօտութեան միջոցին անզօր պէտքէ գտնուին դրանք: Հարցրէք այդ մասին մեր Արաեօվ Մարկիչից, Դասպարովներից, ուրիշներից...

Աստուած վկայ, եթէ օգնութեան մի նշան էլ ցոյց տուել են—այդ էլ ինքնաբերաբար չէ եղել ամենևին, այլ շնորհիւ մի քանի երեսները պնդած ինտելիգենտ մարդկանց, որոնք հազար անգամ դիմել են, համոզել են, ամաչեցրել են և նոյն իսկ վախեցրել են, որ ստացել են մի քանի գրոշ: Հարուստի մէկն ասում է. «Ինձ ինչ թէ հայերին կոտորում են, ես հօ մեղաւոր չեմ, որ ամեն անգամ դաշլա էք տանում, փող էք ուզում»: Միւսն ասում է. «Ես արդէն հայերի համար 200 րուբլի Ստամբօլ եմ ճամբել» ակնարկելով հինգ տարի առաջ տուած այն գումարը, որ ուղարկուած է պատրիարքարան՝ Ջանչեանի որբանոցի համար, եւայլն եւայլն, ո՞ր մէկն ասեմ:

Բագուի առաջին դէպքերից մինչև օրս թէ ներկայացուցիչներից և թէ ժողովրդից հաւաքուած է և ուղարկուած 2000 րուբլու չափ միայն:

Ահա սրանք են մեր տուրքերը, մեր բարքերը:

Նոր-Կալէ:

ՀԱՄՇԱՐԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ

Աստծու օրհնած երկիրը.—Մեր էշը լաւ է մաշինից.— Նոր տեսակի խոլերա.—Երին առանելու արձանը.—«Առաջնորդ-առաջնորդ» ենք խաղում.— Ընտրութիւններ.— Դիրեգմոնափոր վարդապետ.—Մեր գործերը վատ չեն գնում:

I

Տիեզերքի Արարիչը մեծանդամ Գաբրիել հրեշտակապետին ուղարկում է իւր ստեղծած աշխարհը՝ քննելու և տեղեկանալու համար, թէ ինչ դրութեան մէջ է գտնուում այդ աշխարհը, որ գայ իրեն զեկուցանէ: Հրեշտակապետն գալիս է Եւրոպա և պտտում մի ծայրից միւսը ու տեսնում զարմացած.—Հազարաւոր գործարաններ, հազար տեսակ մեքենաներ, ուղիղ և լայն ճանապարհներ, հսկայական շէնքեր, գետնուղիներ՝ վեհաշուք կամուրջներ, էլեկտրական լուսաւորութիւն և էլեկտրական շարժիչներ, պատերազմական ահելի շոգենաւեր իրենց ահելի թնդանօթներով, շատ տեղերում սարերը քար և քանդ արած վառօդով կամ դինամիտով, գետնին հաւասարեցրած, հարթած, երկաթէ ձողեր անցկացրած, որոնց վրայով գլորուելով օրը տասն անգամ կտաղած, կրակ ու ծուխ բերանին, «գոռում-գոչումով, գդրդելով, ծվվալով, սլանում է շոգեշարժը իւր հետևից քարշ տալով տասնեակ տներ և մի քանի ժամուայ ընթացքում կտրելով հարիւրաւոր վերստեր... մի խօսքով, Հրեշտակապետն Աստուծոյ ստեղծած նախկին աշխարհը տեսաւ բոլորովին կերպարանափոխուած, խայտառակ դրութեան մէջ:

Հրեշտակապետն անցաւ Ամերիկա, տեսաւ նոյնպէս ամեն ինչ կերպարանափոխուած. մխիթարական ոչինչ չկար:

Նա մեծ յոյս ունէր Աֆրիկայի և Աւստրալիայի վրայ, բայց դժբախտաբար այդ երկիրներն էլ էին ապստամբուած արարչութեան դէմ, թէպէտ և համեմատաբար աւելի նուազ չափով:

Տխուր էր հրեշտակապետը. մնացել էր Ասիան. թէ այդտեղ էլ մի կուսական երկիր չգտնի, վա՜յն եկել է ու իրեն տարել. էլ ի՞նչ երեսով պիտի ներկայանայ Ստեղծողին և հաշիւ տայ իւր տեսածների համար: Բայց չէ, ահագին Չինաստանի միջով անցնելիս, նրա դէմքը քիչ բացուեց, և իրեն ճանապարհը շարունակեց դէպի հարաւ-արևմուտք, նրա ուրախութեանը չափ ու սահման չկար, երբ հանդիպեց մի այնպիսի երկրի, որ բոլորովին նման էր Աստուծու ստեղծածին, և որին արարչութեան օրից մինչև այդ օրը մարդկային ձեռք երբեք չէր կպել: Նոյն ժայռերն ու ձորերը, նոյն սարերը ու քարերը, նոյն օրհնեալ ուղտերի ու էշերի քարվանները, և այլն և այլն: Ուրախութեան ժպիտը բերնին՝ հրեշտակապետն մեր սլացաւ դէպի ստեղծողի դահը աւետիս տալու.

— Տէ՛ր, ամբողջ աշխարհը պտտեցի, միայն մի երկիր գտայ Քո ստեղծածի նման:

— Ո՞րն է այդ օրհնեալ երկիրը:

— Պարսկաստանը:

Տեսնո՞ւմ էք մեր երկիրը—Աստծու օրհնած երկիրն է. թ'ող ուրիշ երկիրներում իրար միս կրծոտեն, իրար կոտորեն, անմիտ պատերազմներ մղեն, ամբողջ քաղաքներ կրակեն, հազարաւոր մարդկանց անմեղ արիւն թափեն,—մեր աշխարհին վերաբերեալ չէ, խաղաղութիւնն է թագաւորում ամենուրեք:

Մեզանում մարդկային ձեռքերն ստեղծագործութիւնից մինչև օրս նեղութիւն չեն տուել ո՛չ քարերին, ո՛չ սարերին. չէ՞ որ մեղք է Աստծու շինածը քանդել կամ փոխել. ինչի՞ են պէտք երկաթուղիները — այդ սատանայի մեքենաները,—շիտակ ճանապարհները, գործարանները, զանազան տեսակ մեքենաները... Ասում են, որ ֆրանգներն այնպիսի կառք են շինել, որ առանց ձիաների գնում է, քամու պէս վազում. փառք շատ, Աստուած, մեղա՛յ քեզ, ինչ որ չէինք տեսել ու լսել, տեսանք.—այդ բոլորը մեր մեղքերից են..: Դէ՛, եթէ պէտք լինէր, Աստուած կը շինէր, մեզ կտար էլի հազա՛ր փառք մեր ուղտերին, մեր էշերին:

— Ա՛յ համշարի, հարցնում են ճանապարհի վրայ բանող մշակին.—այդ ինչ ճանապարհ էք շինում:

— Մաշին եօլի,—պատասխանում է:

— Ինչպէս թէ՞ մաշին եօլի, ախր դա ինչպիսի ճանապարհ է:

— Դա այնպիսի ճանապարհ է, որի վրայով մաշին պիտի երթայ:

— Լաւ, որ ճանապարհ չլինի, միթէ մաշինը չի կարող գնալ:

— Չէ, չի կարող, դա այնպիսի մաշինէ, որ ուղիղ ճանապարհով կերթայ:

— Իս սարերով չէ՞ կարող գնալ:

— Չէ, չէ կարող:

— Դէ՛ ասա, մեր էշը հազար անգամ մաշինից լաւ է էլի:

Մեր համշարիների հասկացողութիւնը երկաթուղու վերաբերմամբ արտայայտուած է վերջին երկու տողերում:

Բայց առ այժմ այսքանը բաւական է Պարսկաստանի և պարսիկ համշարիների վերաբերմամբ, բաւական է ինչքան բամբասեցինք դրանց, այժմ գանք մեր հայ համշարիներին. (համշարի խօսքը վիրաւորական չէ և նշանակում է համաքաղաքացի, իսկ վիրաւորուողներին խորհուրդ կտամ Թաւրիզի ամբարների հոտած ջուրը խմել, ինչքան սրտներն ուզում է):

Գիտնականները և խելօք մարդիկ ասում են՝ որ խոլերա կոչուած ցաւը առաջանում է շատ մանր, հասարակ աչքով անտեսանելի միկրոբներից. ես այդ ընդունում եմ, բայց գիտնականները չգիտեն՝ որ այդ միկրոբները աճում, մեծանում և մարդու չափ են դառնում և նոյնքան սոսկալի են, որքան մանր միկրոբները. ապացոյց այն՝ որ անցեալ տարի խոլերայի միկրոբներ երբ էին մեսպառնում, իսկ այս տարի նոյն այդ միկրոբների սերունդը, որոնք ոչ աւել ոչ պակաս, ուղիղ մեզ պէս են արտաքին կազմութեամբ, միայն այն տարբերութեամբ, որ անցեալ տարի խոլերայի ձեռքից մեր ազգայինները փախչում էին քաղաքից զանազան վայրեր, իսկ այս տարի, Նոր տեսակի խոլերայի ժամանակ մարդիկ ուրիշ տեղերից փախչում են քաղաքումս ապահովութիւն գտնելու։ Բայց չեմ կարծում, որ Նոր տեսակի խոլերան համաճարակի բնաւորութիւն ստանայ, որովհետև ամենախիստ միջոցներ են ձեռք առնուած կառավարութեան կողմից այդ միկրոբներին խեղդելու համար։

Խե՜ղճ չաղ մարդիկ. տարէնը մի քանի անգամ ահ ու սարսափի ազդեցութեան տակ հալ ու մաշ են լինում։

Բայց մենք ոչ մի վախ չունենք, որովհետև զինուած ենք, զինուած ենք բոլորս մեծից—մինչև փոքր, գիտէ՞ք ինչով.—ամենավերջին կատարելագործութեան հասած հաւատով, յոյսերով և լաւատեսութեամբ։ Մենք պինդ բռնել ենք Աստծու փէշից. վախենում եմ փէշը պատռուի և Աստուած մեզ վրայ բարկանայ։

Կովկասի բնակչութեան արիւնը, ինչպէս երևում է դէպքերից, շատացել է և կարիք է զգացւել «արիւն առնել» կատարելագործուած գործիքների միջոցով և հմուտ բժիշկների ձեռքով, բայց, այստեղ, մեզանում բնակչութիւնը սակաւարիւն է և կարիք չէ զգում «արիւն առնել»։ Բայց եթէ սխալուի և արիւն առնել տայ, ոչ ոք կենդանի չի մնայ, մանաւանդ որ այստեղի հէքիմները արիւն առնելու նրբութիւնները չգիտեն, որտեղից քէֆները տայ՝ այնտեղից կառնեն և ընդմիշտ, հաւշարիներից կըբժշկուենք աշխարհային ցաւերից ու հոգսերից և երանելիների դասը կըդասուենք։

—

Բայց գիտէ՞ք արդեօք ի՞նչ են արել և ի՞նչ են անում մեր ազգայիններն այս տագնապալից օրերում։

Զարմանաք, եթէ որ ասեմ՝ «առաջնորդ-առաջնորդ» են խաղում. դա մի նոր խաղ է, որ յատուկ է Թաւրիզեցիներին, և եթէ չեմ սխալւում, մասամբ էլ բուլղարահայերին։ Բայց մենք ուրիշների հետ գործ չունենք, մեր ցաւն հոգանք։

Մեր առաջնորդարանը, որ առաջ բռնապետական էր, այսինքն՝ Առաջնորդի իրաւունքներին կամ աւելի ճիշտը՝ կամայականութիւններին սահման դնող չկար, այժմ շնորհիւ ազգային Թեմական Խորհրդի, սահմանադրական է։

Մօտ երկու տարի է Հայր Մուրադեանի այստեղից գնալը, և դեռ մինչև օրս առաջնորդ չկայ առաջնորդարանում։ Ո՛չ թէ նրա համար չկայ, որ Թաւրիզեցիք կամ Ատրպատականը չեն ուզում առաջնորդ ունենալ, ո՛չ. այլ նրա համար չկայ, որ ընտրուած առաջնորդը չի բարեհաճում ազատ-ապահով, հանգիստ կեանքը թողնել և գալ հաւշարիների երկիրը։

Առաջնորդարանում ժողով կայ. պատահում էք թեմական խորհրդի անդամներից մէկին անհաստատ քայլերով դէպի առաջնորդարան գնալիս։

— Ու՞ր էք գնում.—հարցնում էք։

— Գնում ենք «առաջնորդ-առաջնորդ» խաղանք.—պատասխանում է։

Պատգամաւորներ են ընտրւում Ատրպատականի ամեն կողմերից՝ գալիս Թաւրիզ ընտրութիւն կատարելու։ Բացւում է պատգամաւորական ժողովը։

Նախագահը յայտնում է ժողովի նըպատակը։ Կատարւում են ընդունուած ձևականութիւնները։

Նախագահ. — Առաջարկեցէք ձեր ընտրելիները։

ա. *Պատգամաւոր.*—Մենք ո՞ւմ ենք ճանաչում, որ առաջարկենք։

բ. *Պատգամաւոր.*—Ինչո՞ւ, մենք ճանաչում ենք Սարաճեանին։

գ. *Պատգամաւոր.*—Այ՛ո, Սարաճեանին լաւ ենք ճանաչում. հենց նա յարմար է։

Նախագահ.—Գաղտնի քուէարկենք։

Պատգամաւորներից մէկը.—Էլ ինչ կարիք կայ քուէարկելու, քանի որ միմիայն Սարաճեանն է ընտրելին։

Նախագահ.—Ձևականութիւնը պիտի պահպանել։

Բաժանւում են թղթի կտորները, մի քանի րոպէից յետոյ հաւաքում և սկսում կարդալ՝ Սարաճեան, Սարաճեան... այսպէս մինչև վերջ։

Նախագահը յայտնում է քուէի արդիւնքը՝ Ցովսէփ եպ. Սարաճեանը միաձայն ընտրւում է Ատրպատականի առաջնորդ։ Կատարւում են վերջաբանի ձևականութիւնները։

Խմբագրւում է երկու շնորհաւորական հեռագիր. մէկը՝ Էջմիածին վեհ. Հայրապետին, միւսը Ամերիկա՝ Սարաճեանին։

Միքանի օրից յետոյ ստացւում է պատասխան։

Ց. Սարաճեանը հեռագրում է՝ «Ինձ միանգամ խայտառակեցիք, ճամբու դրիք. ընտրեցէք այնպիսին, որ դեռ չէ խայտառակուած»։

Հայրապետը հեռագրում է «Կատարել նոր ընտրութիւն»։

Գաւառներից եկած պատգամաւորներից շատերը իրենց ձայները տալիս են տեղական պատգամաւորներին և իրենք գնում իրենց գործին։

Նորից թեմական խորհուրդ, նորից պատգամաւորական ժողով, նորից մի շարք ձևականութիւններ։

Առաջարկւում են այս անգամ երկու ընտրելիներ։

Պատգամաւոր.—Քանի՞ տարեկան է Ա.

Մի այլ պատգ.—Միրուքը երկա՞ր է թէ կարճ։

Պատգամ.—Բ. աւելի բարձրահասա՛կ է թէ՞ Ա., մեր երկիրը աւելի ուշադրութիւն է դարձնում արտաքինի վրայ։

Պատգամ.—Մեր առաջնորդը պէտք է երկար հասակ ունենայ, փառահեղ միրուք, մարդկանց աչքին չերևայ, միշտ կառքով ման գայ. շքանշաններ շատ ունենայ։

Միրուքի, դէմքի, հասակի, տարիքի վերայ երկար վիճաբանելուց յետոյ ընտրւում են Բ.-ին առաջնորդ էլի միաձայն։

Էլի շնորհաւորական հեռագիր, էլի մերժում։ Բ.-ն հեռագրում է Էջմիածնից թէ՝ «Ցովսէփ եպ. Սարաճեանը, ձեր նախկին առաջնորդը հեռագրել է ինձ թէ՝ Թաւրիզ գնացողին խայտառակում և ճանբայ են դնում, եղբայրակցութիւնը թողնում եմ ձեզ»։

Զարմանամ ասել, որ այս ընտրութիւնը ղեկավարում էր յատկապէս առաջնորդական ընտրութեան համար Էջմիածնից եկած Մ. վարդապետը, որ իւր մի քանի օրուայ ընթացքում արած բարեփոխութիւնների համար «գերեզմանափոր» անունն է վաստակել, եկեղեցու շուրջը գտնուած գերեզմանները քանդելուն համար. երբեմն հայր սուրբը բառացի կերպով և ճշտութեամբ կատարել է «եղիցի անշարժ ց՚գալստեան Քրիստոսի» խօսքերի իմաստը։

Է՞, ինչ երկարացնեմ, «առաջնորդ-առաջնորդ» են խաղում. վատ չի լինիլ, եթէ այս խաղը մի քանի տարի ևս շարունակուի, մինչև որ երկու կողմից ևս ձանձրանան, թողնեն այդ խաղը և այլ խաղ հնարեն։

Մի երկու շաբաթ սրանից առաջ ընտրել են միաձայն Ն. եպ.-ին։ Հաւատացած են ամենքը, որ պիտի լսեն նախկին պատասխանները։

Վերջապէս մեր ինչի՞ն է պէտք առաջնորդ, երբ առանց դրան էլ գործերը վատ չեն գնում. (խօսքը մեր մէջ մնայ՝ գործ չկայ որ կամ լաւ գնայ, կամ վատ)։ Երկու վարդապետ երբար հետ այստեղ չէին կարողանում՝ եօլա գնալ, երբար հետ խռով էին և եկեղեցու բեմից «խաղաղութիւն ամենեցուն» էին գոչում. եթէ մեր հոգևորականները այսպէս իւրեանց գեղեցիկ օրինակներով ժողովրդին առաջնորդեն, լաւ բարի պտուղներ կունենանք ժամանակին։

Զարմանալի է թէ՝ Էջմիածնում այնքան հոգևորականներ միասին խմբուած ինչպէս կարողանում են հաշտ ապրել։

Թաւրիզում առաջնորդին կընդունեն շուքով, ճանապարհ կանեն անշուք, որ թարգմանի՝ առաջնորդին պատուաւոր կերպով ընտրում են, անպատիւ կերպով ճանապարհ դնում. լա՛ւ լսեցէք դուք ապագայ առաջնորդացուներ, բայց և միևնոյն ժամանակ մխիթարուեցէք, որովհետև երբեմն առաքեալներն էին այդ օրին ընկնում։

Կովծու—փառք Աստծու։

Սեւայր.

Թաւրիզ, 29 Օգոստոսի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈՅ

—

Համեմատելով այն դրութիւնը, որ ունէր Ռուսիան ծովի վրայ պատերազմից առաջ, այն դրութեան հետ, որ ստանում է նա պատերազմից յետոյ,—«Разсвѣтъ»-ը շատ տխուր եզրակացութիւնների է յանգում։

«Մենք,—ասում է նա,—ծայրագոյն Արևելքում ունէինք երկու ամրացած նաւահանգիստ, որոնք իբրև յենակէտ էին ծառայում մեր նաւատորմղի համար—Վլադիվոստոկը և Պորտ-Արթուրը։ Ցենուած առաջինին որը կենդրոնական տեղ է բռնում Ճապոնական ծովում, նաւատորմիղը կարող էր պաշտպանել մեր ծովափը, և միևնոյն ժամանակ սպառնալ Ճապոնիայի ամբողջ արևմտեան ափին։ Բացի դրանից, նա պաշտպանում էր հարևան թոյլ, անպաշտպան Կորէան ճապոնական զաւթումներից։ Պորտ-Արթուրը նաւատորմղին գերիշխող նշանակութիւն էր տալիս դէպի Պէկին տանող ճանապարհների վերաբերմամբ և թոյլ էր տալիս գործելու Ճապոնիայի հարաւային և մասամբ արևմտեան ափերի դէմ։ Ցետոյ, Պ.-Արթուրը յենակէտ ունենալով, մեր նաւատորմիղը կարող էր դուրս գնալ ազատ ովկիանոս գործելու համար նրա առևտրական ամենագլխաւոր ճանապարհների վրայ։ Կորէան, ուղղակի Ճապոնիայի սրտին կպած իւր գերազանց նաւահանգիստներով, հանդիսանում էր իբրև մի վճռելի երկիր, որի վրայ ունեցած ազդեցութիւնը ձեռքից ձեռք էր անցնում։ Տարակոյս չկայ, որ եթէ մենք հարկաւոր չափով զարգացնէինք մեր զինեալ ոյժերըն Արևելքում և ամրացնէինք Մանջուրիան, Ռուսիայի ճնշումը Կորէայի վրայ վերջի վերջոյ կըգերազանցէր Ճապոնիայի ճնշումից և այն ժամանակ,—եթէ չկամենայինք գերիշխանութիւն ձեռք բերել Կորէայի վրայ,—կարելի էր նրանից կազմել մի չէզոք բարեկամ պետութիւն, որ բաւականաչափ ոյժ կունենար թոյլ չտալու, որ Ճապոնիան ներս խուժէր Մանջուրիա։

«Մեծ ովկիանոսի ափերում մենք կառուցանում էինք Սիբիրի գաղութի հսկայական շէնքի ճակատը մի շարք լայն պատուհաններով, որոնք նայում էին դէպի լոյս աշխարհ, և ռուսական նաւատորմիղը ոչ հեռու ապագայում մեծապանծ դեր պիտի կատարէր։ Իւր պատմութեան մէջ այս առաջին անգամն էր, որ նա լայն գործունէութեան էր պատրաստւում ազատ, չսառչող ովկիանոսի, նոր Միջերկրական ծովի ազատութեան մէջ։ Բայց մեր մեծ շէնքի թերի մնացած ճակատը կործանեց պատերազմը...»

Գրաւելով Ռուսիայի տեղը Պորտ-Արթուրում, Ճապոնիան հնարաւորութիւն է ստացել չարունակ հզօր ճնշում գործելու Չինաստանի վրայ։

Գերիշխանութիւն ձեռք բերելով Կորէայի վրայ, Ճապոնիան առաջին քայլ արաւ իւր նպատակին հասնելու համար, որով ձգտում էր Ճապոնական ծովը իւր ներքին ծովը դարձնել։ Քարտէզի վրայ ձգած մի հայեացք համոզում է այդ բանում։ Մենք տեսնում ենք, որ Ճապոնական ծովի ափերի մեծ մասը ներկայումս գտնւում է Ճապոնիայի ձեռքին։

Երկաթեայ շղթան արագօրէն սեղմւում է և սպառնում է մօտիկ ապագայում վերջնականապէս փակելու և բոլորովին յետ շպրտելու Ռուսիան Մեծ ովկիանոսի ափերից։ Սախալինի հարաւային մասը Ճապոնիային տալով փակւում է դարձեալ մի ելք դէպի ովկիանոս։ Թէև հաշտութեան պայմանագրով Ճապոնիան պարտաւորուել է (?) չամրացնել կղզու իւր նուաճած մասը, բայց լրջօրէն վերաբերուել այդ պարտաւորմանը անխոհեմ բան կըլինէր։ Վերջին պատերազմի պատմութիւնից մենք գիտենք, որ Ճապոնիան շատ պարզ կերպով է վարւում միջազգային իրաւունքի հետ, և յոյս ունենալ, թէ նա կոռեկտ կերպով կըգործադրի յիշեալ պայմանը, ոչ մի հիմք չկայ։ Հենց որ նա շահաւէտ և ժամանակայարմար գտնի Սախալինի ամրացումը, պայմանագիրը խախտելու իրաւունք տուող պատրուակներ կըգտնի որքան ուզենայ...

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ մեր ծովային դրութիւնը ծայրագոյն Արևելքում փոխուել է ի մեծ վնաս Ռուսիայի։ Մեր միակ նաւահանգիստը—Վլադիվոստոկը, որ դեռ ևս մեր ձեռքին է մնում, գտնւում է մի ծովում, որի բոլոր ելքերը գտնւում են թշնամու ձեռքին։ Լապերուզի, Սանգարի, Կորէայի նեղուցները, որոնք Ճապոնական ծովը միացնում են ովկիանոսի հետ, կարելի է փակուած համարել մեր նաւատորմղի համար պատերազմի ժամանակ... Վլադիվոստոկը, Ասիայի արևելքում ունեցած մեր այդ միակ նաւահանգիստը գտնւում է այսուհետև յարատև վտանգի մէջ. Որքա՜ն ջանք, հսկայական աշխատանք ու ծախսեր են պէտք, որ Ռուսիան պահէ իւր ձեռքում այդ նաւահանգիստը, որպէսզի ապագայ պատերազմի հէնց սկզբում խիզախ թշնամին չկտրի նրա հաղորդակցութիւնը Ռուսիայի հետ և Պորտ-Արթուրի օրը չձգի նրան»։

—

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՃԱՊՈՆԻԱ.—Ֆրանսիական ու ամերիկական դիւանագիտութեան ներկայացուցիչները միջոցներ են ձեռք առնում Ռուսիայի ու Ճապոնիայի միջև գերիների փոխանակութիւնը փութացնելու վերաբերմամբ, ինչպէս նաև պատրաստութիւններ են տեսնում նրանց իրենց հայրենիքները ճանապարհելու մասին։ Պարիզից ստացուած տեղեկութիւնների համաձայն, ռուս շատ սպաներ յառաջիկայ ձմեռը պէտք է անցնեն Բրլիներում, իսկ ծովակալ Րոժեստվենսկին սպասւում է մօտ օրերս Նիցցում։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնից

—

8 Սեպտեմբերի

ՏՈԿԻՕ, 7 սեպտ.—Ուէմօ ծառաստանում քաղաքի միտինգ կայացաւ հաշտութեան կնքումի դէմ։ Միտինգը խաղաղ անցաւ։ Նոտ քիչ մասնակցող կար անձրևի պատճառով։ Որոշուած է խնդրամատոյց լինել, որ կայսրը հրաժարուի պայմանագիրը վաւերացնելուց։

ՕՆԴԱ., 8 սեպտ.—«Մոռացուած» կոչուած կորէական զօրաբանակի մէջ կատարեալ անորոշութիւն է տիրում զինադադարի մասին։ Նամակներ ու լրագրներ ստացւում են շատ ուշ-ուշ, մատակարարումը բացակայում է ճանապարհներ չըլինելու պատճառով, ուստի հարկադրուած են օգտուել բնակիչների ունեցած-չունեցածից, մարկի տոտոներ քիչ կան։ Պարգևատրւում են հաւասէնտ սպաներ ու զինուորներ, այն էլ բացառապէս շտաբին սպասարկող և քամակում գտնուած զօրամասերում։ Անձրևները սաստկացրել են հիւանդութիւնները, մանաւանդ որ չկան հիւանդանոցներ և դեղորայք։ Կարմիր Խաչը բացակայում է։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ, 8 սեպտ.—Վերջնականապէս սահմանուած է, որ պայմանագրի վաւերացումը տեղի կունենայ Ուաշինգտոնում շուտով այն բանից յետոյ, երբ երկու պետերը ստորագրեն։

ՊԱՐԻԶ, 8 սեպտ.—Հարվէյ, Վալլինա, Մալտաս և Կասսանել անիշխանականները դատի են մատնուած առաջին երկուսը Լուբէի, Ալֆոնս թագաւորի և պահակախմբի 18 զինուորների կեանքի դէմ սպանութեան փորձ կատարելու, իսկ վերջին երկուսը այդ գործին մասնակցելու մեղադրանքով։

ՆԻՒ-ԵՈՐԿ, 8 սեպտ.—Աւետարական պալատը դիմեց իւր նման հաստատութիւններին առաջարկելով, որ նրանք աջակցեն փոխադարձ պայմանագիր կնքելու Ռուսիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև։

ԼՈՆԴՈՆ, 8 սեպտ.—«Դէյլի Մէյլ»-ը հաղորդում է, որ ռուսաց կառավարութեան գործակալն երեկ բանակցութիւն է ունեցել Վիկկերսի և Մաքսիմի ֆիրմաների հետ նաւեր շինելու մասին, բայց բանակցութիւնը դրական հետևանք չի ունեցել։ Կարծում են, որ ռուսաց կառավարութիւնը կամեցել է առաջուց տեղեկանալ գործին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտ.—Համալսարանի ռեկտոր ընտրուած է ֆիզիկայի պրոֆեսոր Բորգման։

ՕԴԵՍՍԱ, 8 սեպտ.—Շուտով գալու է Սախալինի նախկին նահանգապետ գեն. Լեապունով։ Ցալթայի անկարգութիւնների դատը նշանակուած է Թէոդոսիայում հոկտ. 18-ին։

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

—

ՕՏՏՕՎԱ, 8 սեպտ. Կանադայի կառավարութիւնը հեռագրով դիմում է արել Լոնդոն Անգլիական կառավարութեան միջամտութիւնը խնդրելով այն գործում, որ վերաբերում է դէպի Սախալին գնացող աղով բեռնաւորուած նաւի ճապոնացիների կողմից բռնուելուն։

ԹԵՀՐԱՆ.—Մամուլը մատնացոյց է անում, որ բրիտանական յանձնախմբի սահմանները որոշելու աշխատանքների մէջ անկանոն կերպով Աւղանիստանին են յատկացրել պարսկական Սէիստանի մի մասը, որից էմիրը կազմել է առանձին շրջան Ֆերա գլխաւոր քաղաքով. Նմանապէս և յանձնախումբը Պարսկաստանից խլել է Հէլմենդա գետի երկուերորդական մասը, որ սպառնում է պարսկական Սէիստանը ամլութեան դատապարտելու։ Լրագրները պնդում են, թէ չպէտք է ջրերը բաժանելու սահմանաւորման արձանագրութիւնը հաստատել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 9 սեպտ. սեպտեմբերի 14-ին Պետերբուրգում տեղի ունեցաւ նահանգական ազնուականութեան ժողովը Պետական դումայի հետ կապ ունեցող ինչ ինչ խնդիրներ խորհրդածութեան առնելու համար։ Ժողովը նմանապէս և պէտք է զբաղուի Դումայի ունենալիք ուղղութեան բնաւորութեան և գործունէութեան վերաբերուած խնդիրներով։

ՕՆԴԻ—8 սեպտեմբ. Տարածուած լուրերի համաձայն Ճապոնական ձախ թևի յառաջապահ զօրաբաժինները երկու վերստաչափ առաջէ գնացել։

ՄՈՍԿՈՒԱ.—Մոսկուայի երդուեալ հաւատարմատարների մի խումբ իր վրայ է առել Չերնիգովի նահանգի Պոչէնում տեղի ունեցող հողային անկարգութիւնների ժամանակ մեղադրուածների գործի պաշտպանութիւնը։ Նոբելը յայտարարել է, թէ ինքը այս տարի կարող է բաւականութիւն տալ պատուէրների 60 տոկոսին միայն, իսկ մնացած պատուէրների կատարումը յետաձգւում է յաջորդ տարուայ միևնոյն գնով, և կամ առաջարկւում է ներկայումս իւրաքանչիւր փութին վճարել 57 կոպ.

ԲԱԴԷՆ-ԲԱԴԷՆ.—Բիւլովը կէս օրին ընդունեց Բեռլինից ժամանող ճապոնական դեսպանին։

Կ. ՊՈԼԻՍ.—Այստեղ և Սոֆիայում մեծ կարևորութիւն են տալիս Սոֆիայի սերբիական դիւանագիտական գործակալ Սիմիչին՝ բուլղարական էքզարխի տուած այցելութեան, ի նկատի ունենալով վերջինիս բուլղարական գործերի վրայ ունեցած ահագին ազդեցութիւնը։ Երկու կողմերն ևս յոյս ունին, որ Մակեդոնիայում սերբերի ու բուլղարների յարաբերութիւնները կըլաւանան։ Սուլթանի կեանքի դէմ յուլիսի 8-ին եղած դաւադրութեան առթիւ ձերբակալուած մի անգլիացու մօտ դռնապանի պաշտօն ունեցող հայի տուած ցուցմունքի հիման վրայ, անգլիացու տունը խուզարկութեան է ենթարկուել։ Գտնուած են 15 հատ չլցուած ռումբեր պայթուցիկ հեղուկով լի 15 շիշ և մեծ քանակութեամբ հայերէն տպուած բրոշիւրներ։ Հայերի ձերբակալումը շարունակւում է։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախւում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում

ՇԻԼԼԵՐԻ

գրուածքները — Գ. Բարխուդարեանի թարգմանութեամբ

1. Վիլհէլմ Տէլ . .	գինն է 60 կ.
2. Դոն Կարլոս . . .	1 ր. — »
3. Օրլէանի կոյսը . .	— 60 կ.
4. Իմաստուն Նաթան	60 կ.

Լոյս տեսաւ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆՑԻ
ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ
և
ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ
տարրական դասընթաց
Առաջին մաս
Ստորին դասարանների համար.
Գինն է 20 կոպ.

Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցները։ Պահեստը հեղինակի մօտ. հասցէն Эчміадзинъ, Гарегинъ Левонянцъ. Въ Академіи. 10—2.

„ԼՈՅՍ"

գրախանութում ընդունւում են ամենատեսակ գրքեր կոմիսիայով վաճառելու համար։ Դիմել՝ Тавризъ (Персія) книжн. магазинъ „Луйсъ", Григорію Агаджанянцъ. 10— 2.

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
Նախկին օրդինատոր «Ս. Պետերբուրգի Աչքաբուժական Հիւանդանոցի»
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Ընդունում է աչքի հիւանդութիւն ունեցողներին ամեն օր.
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Հասցէն. Վելյամինովսկայա փ. տ. №8.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. Մ. ԿԵՕՆՃԵԱՆ
Վերադառնալով արտասահմանից վերսկսել՝ հիւանդների ընդունելութիւնը։ առաւօտ. 9—2 և երեկ. 5—7. Հասցէն՝ уголъ Абасъ-Абадскаго пер. и Лермонтовской ул., д. Церковный. (1) 2—2

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ՓՈՐՁՈՒԱԾ ԳՐԱՇԱՐՆԵՐ։
Դիմել տպարան Կուտատելաձէի, Բագրատ Ալավերդեանցին ժամը, 10-ից 12-ը։

Բացուած է չորս ամսեայ (սեպտեմբերից-յունուար) 1905 թ. բաժանորդագրութիւն

ԱՂԲԻՒՐ
Պատկերազարդ ամսագիր մանուկների համար։
—
ԱՌՈՂՋԱՊԱՀ
Առողջապահական երկշաբաթաթերթ.
—
ԳԵՂԱՓՆՋԻԿ
Պատկերազարդ կիսամսեայ գրական-գեղարուեստական հանդէս։

ԴԱՍՏԻԱՐԱԿ
ԱՂԲԻՒՐԻ II բաժին. մանկավարժական հանդէս ծնողների և դաստիարակների համար։
—
ԻԼԼԻՒՍՏՐԱՍԻՕՆ
Գրական-հասարակական պատկերազարդ երկշաբաթաթերթ։
—
ՏԱՐԱԶ
—
Քննադատական-հասարակական գրական-գիտական պատկերազարդ շաբաթաթերթ։

ԱՅՍ ՎԵՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՉՈՐՍ ԱՄՍԵԱՅ (ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ-ՅՈՒՆՒԱՐ) ԲԱԺԱՆՈՐԴ. 3 Ր. ԱՐՏԱՍ. 6 Ր.

ԱՂԲԻՒՐԻ XXIII և Տարազի XVI տարիների ընթացքում փոփոխուած, կրճատուած ծրագիրները ներկայ 1905 թ. յուլիսի 27-ին երկրիս Փոխարքայից ընդարձակուած են, վերադարձուած է 1882 թ. Կովկասի նախկին Փոխարքայից հաստատուած ծրագիրը և ՏԱՐԱԶԻՆ թոյլատրուած ամենաընդարձակ յաւելուածներ, որոնք կը հրատարակեն բազմաբովանդակ և ճոխ բաժանմունքներով։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Վ. Ա. ԳՐԻՆԵՕՎԱՅԻ
(Դրժևիչա Կովալ)
Գոյութիւն ունի 1883 թուականից։

Նախապատրաստւում են առարկաներից և նոր լեզուներից երեխաներ բոլոր միջնակարգ դպրոցները մտնելու համար։ Աւանդւում են տեղական լեզուներ։ Ընդունւում են երեխաներ իբրև գիշերօթիկ, կիսագիշերօթիկ և երթևեկ։ Ըստ ցանկութեան աւանդւում է երաժշտութիւն։ Թիֆլիս, Դաւիդովսկայա փող. № 5, տ. Գուտտուայի, «Կրուժոկի» կողքին։ 10—3.

Дозв. ценз. Тифлисъ, 9 Сентября 1905 г. Տպարան Քութաթելաձէի։ Типог. Ар. Кутателадзе, Ник. ул. № 21.